

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

554

որ քեզիքներ պրոլետարներ, միացե՛ք:

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՄԱՐԳՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

№ 1

Ֆ. ՄԵՐԻՆԳ ՈՒ Ռ. ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ

ԿԱՐԼ ՄԱՐԿՍԻ
„Կ Ե Պ Ի Տ Ե Լ Ի“
ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

Թարգմանեց ու հավելվածներով լրացրեց
Թ.Ս.Գ. Ս.Վ.ԳՍԼՈՅԳՅԱՆ ✓

Յ Ե Ր Ե Վ Ս Ե Ն — 1924

3K74

Մ-66

3K14
Մ-66
ԵՄ

103 NOV 2009 16 MAY 2005

Բոլոր յեկիւրեանի պրոլետարներ, միացե՛ք:

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՄԱՐԿՄԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆ

№ 1

Ֆ. ՄԵՐԻՆԳ ՈՒ Ռ. ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ

ԿԱՐԼ ՄԱՐԿՍԻ
„Կ Ե Պ Ի Տ Ե Լ Ի“
ՀԱՄԱՌՈՑ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

~~Թարգմանիչ ու համեմատիչ լրացրիչ~~
~~ՄԱՐԿՍԻ ԿՆՅԱՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆՆԵՐԻ~~
Թարգ. Աղբյուր Բեգյան

Ե Ե Ր Ե Գ Ս Ն - 1924

Հայաստանի Կոմկուլիցիայի կենտրոնը
Հ. Ս. Խ. Հ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՄԱՐԿՄԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆ
№ 1

Քրիստոսի Կոմկուլիցիայի կենտրոնը

ԿԱՐԼ ՄԱՐԿՍԻ
„Կ Ե Պ Ի Տ Ե Լ Ի“
ՀԱՄԱՌՈՑ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

Կոմկուլիցիայի կենտրոնը
Հ. Ս. Խ. Հ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՄԱՐԿՄԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆ

Ե Ե Ր Ե Գ Ս Ն - 1924

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջարան:
 2. Ֆ. ՄԵՐԻՆԳ.— «Կապիտալի» անալիզի հատորը:
 3. Ռ. ԼՅՈՒԲՍԵՄԲՈՒՐԳ.— «Կապիտալի» յերկրորդ ու յերրորդ հատորները:
 4. Ֆ. ԵՆԳԵԼՍ.— Կարլ Մարքսի հիմնական ծառայությունը տնտեսագիտության ասպարեզում:
 5. Ֆ. ԵՆԳԵԼՍ.— Թե ինչպես պետք է կարդալ «Կապիտալի» յերկրորդ ու յերրորդ հատորները:
 6. «Կապիտալի» յերեք հատորների բովանդակությունը բաժինների վերնագրերով:
-

ԱՌԱՋԱԲԱՆ

Կարլ Մարքսի «Կապիտալը» վաղուց անցել և համաշխարհային գրականության այն յերկերի շարքը, վորոնց ծանոթ լինելը համարյա պարտադիր անհրաժեշտությունն է քաղաքակիրթ հասարակության ամեն մի անդամի համար: Իսկ անտեսագիտությունն ուսումնասիրողը, ինչ հոսանքի ել պատկանելիս լինի, մի քայլ անգամ անել չի կարող ներկայումս, յեթե տարիներ չե տքնել մեծ անտեսագետի այս գլուխ-գործոցի վրա: Սակայն «Կապիտալը» ընթերցումին կամ ուսումնասիրությանը կարելի չէ անցնել միայն այն ժամանակ, յերբ նախապատրաստական մի կարգ աշխատանքներ կատարված են արդեն: Գործի դյուրության համար ցանկալի չէ մանավանդ, վոր ընթերցողը նախորոք իմանա, թե ինչ խնդիրներ են շոշափվում «Կապիտալի» մեջ և ինչ լուծում ստանում: Մարքսի գլխավոր աշխատության բովանդակության մասին գոնե մի ընդհանուր գաղափար կազմելն անհրաժեշտ է հատկապես հայ ընթերցողի համար, քանի վոր մեր գրականության մեջ, բացի «Վարձու աշխատանք ու կապիտալ»-ից, Մարքսի անտեսագիտական վոչ մի գրվածքի թարգմանությունը չկա, իսկ «Կապիտալը» հայերեն թարգմանությունն օրակարգի մեջ չէ մտել և հայտնի էլ չէ, թե դեռ վորքան ժամանակ մեզանում մնալու է սանջող յերազանք:



666
38

Չեր կարելի հանդուրժել, վոր հայ ունկընդերն ու ընթերցողն անընդհատ լսեն, կարգան ու հողովեն «Կապիտալի» անունը, բայց չիմանան, թե ինչ կա այն «ամանուժը»: Պետք էր բավարարել նրանց հոգեկան քաղցը: Այստեղ ծագում էր մի դժվարութիւն: Խնդիրն այն է, վոր միջազգային մարքսիստական գրականութեան մեջ տակաւին չկա մի ամփոփ ու հանրամատչելի գլուխածք, վոր պարունակէր «Կապիտալի» բոլոր հատորների թուուցիկ, բայց հմտալից ու հարագատ շարադրանքը: Յերկար վորոնումներէից հետո վերջապես կանգ առանք Քեանց Մերինգի՝ 1918 թվին հրատարակած «Կարլ Մարքս, նրա կյանքի պատմությունը» վերնագրով նշանավոր աշխատութեան XII-րդ գլխի 2-րդ ու 3-րդ գլուխներէ վրա, վորոնք տալիս են «Կապիտալի» յերեք հատորի համառոտ բովանդակութիւնը: Սակայն այս յերկու գրվագն էլ Մերինգի գրչին չեն պատկանում: Յերկրորդ գրվագը, վոր խոսում է «Կապիտալի» առաջին հատորի մասին, Մերինգն է գրել, իսկ յերրորդ գրվագը, վորի նյութը կազմում են «Կապիտալի» յերկրորդ ու յերրորդ հատորները, հռչակավոր մարքսիստ Ռոզա Լյուքսեմբուրգի հեղինակածն է: Վերին աստիճանի խրատական ու յիվրոպացու բարեխղճութիւնը բնորոշող են այն սողերը, վորտեղ Մերինգը, «Իերման սոցիալ-դեմոկրատիայի պատմութեան» մեծանուն հեղինակն ու մարքսիզմի միջազգային խոշորագույն թեորետիկներէից մեկը բացատրում է, թե ինչու ինքը չէ գրել «Կապիտալի» յերրորդ ու յերրորդ հատորի մասին, այլ շարագրել է ավել ուրիշին:

«Յես ինձ ուրիշներից ավելի կոչված չեյի

զգում մտքի հայացքով մինչև վերջին սահմաններն ընդգրկելու այն բոլոր գիտելիքների հրակայածավալ ասպարեզը, վոր տիրապետում էր Մարքսը: Նույն իսկ վորպեսզի իմ պատկերացման նեղ շնականների մեջ տամ «Կապիտալի» յերկրորդ ու յերրորդ հատորներէ լիովին պարզ շարադրանքը, յես ոգնութեան կանչեցի իմ բարեկամ Ռոզա Լյուքսեմբուրգին: Յես յերջանիկ եմ, վոր իմ գիրքը զարգարել էմ նրա գրչի արտագրանքով»^{*)}

Մերինգի ու Լյուքսեմբուրգի գրածներին կցել ենք յերեք հավելված, վորոնք կամ նպաստում են «Կապիտալի» մասին վորոշ գաղափար կազմելուն կամ հեշտացնում նրա ընթերցումը: Սրանցից առաջինը թվում է Մարքսի կատարածները Տիեռապիստիայան ասպարիզում. բայց վոչ բոլորը: Ենդեւան այդ հատվածում ինչ վոր հիշատակում է, վերաբերում է «Կապիտալի» առաջին հատորին միայն: Այս չէ նշանակում անշուշտ, վոր նա անպատճառ փոքր նշանակութիւն է վերագրում մյուս հատորներում արտահայտած մտքերին: Այդ հատվածում Ենդեւան խոսքը վերաբերում է Մարքսի կատարած հիմնական ծառայութեանը անտեսադիտութեան ասպարիզում, իսկ այս հիմնականն, անկասկած, առաջին հատորումն է ամփոփված:

Յերկրորդ հավելվածը Ենդեւանի մի նամակն է, վորով խորհուրդ յե տալիս, թե ի՞նչպես պէ՛տ է կարդալ «Կապիտալի» վերջին երկու հատոր-

*) Франц Меринг: «Карл Маркс. История его жизни». Перевод Зяп. Венгеровой. Госиздат, Петербург, 1920, յերես VI,

ճերը: Այս առթիվ յերկու դիտելի կետ կանխա-
 ան, վոր մենք այս գրքույկի մեջ Մարքսի գը-
 լուխ-գործոցի առաջին հատորի ուսումնասիրու-
 թյունն հեշտացնելու համար ցույումներ չենք
 տալիս: Սրա պատճառն այն է, վոր առաջին հա-
 տորն անմիջապես պետք է եջ առ աջ ու մեծ
 ուշադրությամբ սերտել, իսկ այս այնպես դըժ-
 վարածատչելի չէ, ինչպես մյուս յերկու հատոր-
 ները: Ինքը Մարքսն առաջին հատորի նախա-
 բանում 1867 թվականին գրում էր.

«Բացի արժեքի ձևին վերաբերող բաժնից,
 այս գիրքն (I հատորը. թ. Ա.) ըմբռնելու հա-
 մար առանձին դժվարություններ չունի: Հաս-
 կանալի յե, վոր յես ի նկատի ունեմ այնպիսի
 ընթերցողների, վորոնք ցանկանում են վորևե
 նոր բան սովորել և, հետևաբար, կամենում են
 ինքնուրույն մտածել»:

Յերկրորդ հավելվածի մասին մյուս դիտելի
 կետն այն է, վոր Ենգելսն հիշյալ նամակում խո-
 սում է ինչպես II հատորի, այնպես և III-ի
 բոլոր բաժինների մասին, բայց մեզ տնհասկա-
 նալի պատճառով, թերեվս մոռացմամբ, լռում է
 յերրորդ հատորի վեցերորդ ու մեծ բաժնի մա-
 սին, վորի վերնագիրն է «Ավելադիր վաստակի
 (добавочная прибыль) հողային ունեատ դառ-
 նալը»: Ընթերցողը սակայն պետք է մտահան
 չանե, վոր հիշյալ հատորի այս բաժինը նույն-
 քան կարևոր է ու մտքի լարում պահանջող, վոր-
 քան յերրորդ բաժինը — «Ամբողջ հասարակական
 կապիտալի վերարտադրությունն ու շրջանառու-
 թյունը» — II հատորում ու առաջին բաժինը —
 «Ապրանքն ու փողն» — I հատորում:

Վերջին հավելվածը տալիս է «Կապիտալի»
 յերեք հատորի բովանդակությունը բաժինների
 վերնագրերով, բովանդակություն, վորն աչքի անց-
 կացնելիս միանգամայն հստակ պատկերանում
 է ընթերցողի հանդեպ Մարքսի խոշորագույն
 կոթողի ամբողջության ու մասերի հարաբերու-
 թյունը լրիվ ու ցայտուն:

Անշուշտ, ամենակատարյալ արտացոլումն
 անգամ չէ կարող թողնել այն տպավորությունն,
 ինչ անում է բուն առարկան: Սակայն հայ ըն-
 թերցողն «առ ի չդոյե» պետք է բավականանա
 առ այժմ այս փոքրիկ արտացոլումով, մինչև
 վոր պայմաններն հնարավորություն տան վորևե
 մեկին բախտ ունենալու և հրապարակ հանելու
 համաշխարհային անտեսազիտական գրականու-
 թյան հրաշալիքներից մեծագույնը — «Կապիտալն»
 հայերեն թարգմանությամբ:

1922 թ., սեպտ. 17-ին,

Յերեվան:

ՏՐԱՆՑ ՄԵՐԻՆԳ

«ԿԱՊԻՏԱԼԻ» ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Մարքսը յուր աշխատութեան առաջին գլուխում մեկ անգամ ել ամփոփել է այն բոլորն, ինչ վոր հաստատել եր ապրանքի ու փողի մասին գրած գրքում, վորը լույս եր տեսել 1859 թվականին *)։ Այս արել է վոչ միայն նյութը լրացնելու նպատակով, այլ և այն պատճառով, վոր նույն իսկ ամենախելոք գլուխները լիովին ճիշտ չեյին հասկացել այս խնդիրը. նշանակում է՝ շարադրանքի մեջ, մանավանդ ապրանքի վերլուծութեան ժամանակ, թերութեաններ կային։

Հիշյալ ամենախելոք գլուխների թվին, ի հարկե, չեյին պատկանում գերմանացի գիտնականները, վորոնք «Կապիտալի» ի առաջին գլուխը նզովում եյին նրա «մթին միատիկայի» համար։ «Առաջին հայացքից ապրանքը բոլորին հասկանալի, սովորական, պարզ իր է թվում։ Սրա վերլուծութեան ընդհակառակը, ցույց է տալիս, վոր այս մի շատ բարդ իր է, լի բնազանցական իմաստակութեաններով ու աստվածաբանական ծամածռութեաններով։ Իբրև սպառողական արժեք նրա մեջ վոչ մի խորհրդավոր բան չկա . . .

*) Սուքը վերաբերում է Կ. Մարքսի «Քաղաքատնտեսութեան քննադատութեան շուրջը» վերնադրով գրքին։

Որինակ, յերբ փայտից սեղան են պատրաստում, նրա ձևը փոխվում է։ Այնու ամենայնիվ սեղանը մնում է միևնույն փայտը—սովորական, տեսանելի, զգայական իրը։ Բայց հենց վոր այն հանգես է գալիս իբրև ապրանք, ապա անմիջապես զգայական—զերգզայական իր է դառնում։ Այն վոչ միայն կանգնում է հատակի վրա յուր փոսներով, այլ և մյուս բոլոր ապրանքների նկատմամբ կանգնում է, այսպես ստած, յուր գլխի վրա և այս փայտյա գլուխն անհամեմատ ավելի ցնորուն զազափարներ է ծնում, քան այն դեպքում, յեթե նա սկսեր հմայական սեղանաշարժութեանները։ Այս վիրավորական եր բոլոր փայտյա գլուխների համար, վորոնք մեծ քանակով արտադրում են զերգզայական իմաստակութեաններ ու բնազանցական նրբութեաններ, բայց չեն կարող ստեղծել մի այնպիսի պարզ, զգայական իր, վորպիսին է սովորական, շոշափելի փայտյա սեղանը։

Այս առաջին գլուխն, իսկապես, նույն իսկ դուռ գրական տեսակետից առած, Մարքսի բոլոր գրածների մեջ ամենանշանավորների շարքին է պատկանում։ Այնուհետև Մարքսը դիմել է այն խնդիրը հետազոտելուն, թե ինչպես է փողը կապիտալ դառնում։ Յեթե ապրանքների շրջանառութեան ընթացքում նույնահավասար արժեքներ են փոխանակվում իրար հետ, ապա փողատերն ապրանքներն իրանց արժեքով գնելով ու ծախելով հանդերձ, ինչպես կարող է անուամենայնիվ շրջանառութեանց ավելի մեծ արժեք կորզել, քան նա դրել է փողի մեջ։ Այս հնարավոր է այն հանգամանքի շնորհիվ, վոր

ներկա հասարակական հարաբերութիւնները ժամանակ ապրանքային շուկայում կա մի այնպիսի յուրահատուկ ապրանք, վորի գործադրութիւնը նոր արժեքի աղբյուր ե հանդիսանում: Այս ապրանքը բանվորական ուժն է:

Բանվորական ուժը գոյութիւն ունի կենդանի բանվորի կերպարանքով: Սա կենսամիջոցների վորոշ քանակի կարիք ունի յուր գոյութիւնը պահելու նպատակով, այլ և պահպանելու համար յուր ընտանիքը, վորն ապահում ե նրա մահից հետո նոր բանվորական ուժերի հոսելը զեպի գործարան:

Այս կենսամիջոցները ձեռք բերելու համար անհրաժեշտ բանվորական ժամանակը վորոշում ե բանվորական ուժի արժեքը: Սակայն իբրև աշխատավարձ վճարվող այս արժեքը շատ ավելի փոքր արժեք ե կազմում, քան այն, վոր կարող ե ստանալ նրանից բանվորական ուժը գնողը: Հենց բանվորի այս հավելյալ աշխատանքը, աշխատանքի համար գործադրած այն ժամանակը, վոր բանվորը կորցնում ե յուր աշխատավարձի փոխհատուցման համար անհրաժեշտ ժամանակից ավելի, յավելյալ արժեքի ու կապիտալի անընդհատ աճող կուտակման աղբյուրն ե կազմում: Բանվորի անվճար աշխատանքն ե պահում հասարակութեան բոլոր շահաւորող անդամներին. նրա վրա յե հենվում ու կանգուն մնում այն ամբողջ հասարակարգը, վորի մեջ ապրում ենք մենք:

Սակայն անվճար աշխատանքն ըստ ինքյան սրղի բուրժուական հասարակութեան առանձնահատկութիւնը չե: Քանի կան ունեվոր ու չու-

նեվոր դասակարգեր, չունեվոր դասակարգերը միշտ պետք ե անվճար աշխատանք մատակարարեն ունեվորներին: Քանի հասարակութեան մի մասը մենաշնորհաբար տեր կլինի արտադրութեան միջոցներին, բանվորներն հարկադրված կլինեն, կամովին կամ իրենց կամքի, հակառակ անվճար աշխատանք ավելացնելու այն բանվորական ժամանակի վրա, վոր անհրաժեշտ ե իրենց գոյութիւնը պահպանելու համար, և հենց սրանով ել արտադրութեան միջոցների սեփականատերերի համար կենսամիջոցներ արտադրելու: Աշխատավարձը միայն պատմական հատուկ մի ձեւն ե անվճար աշխատանքի այն սխտեմի, վոր տիրապետում ե այն ժամանակից ի վեր, յերբ հասարակութիւնը բաժանվել ե դասակարգերի: Այս առանձնահատուկ ձեւը, վորպես այդպիսին, պետք ե ուսումնասիրել՝ այն ճիշտ հասկանալու համար:

Փողատերը փողը կապիտալ դարձնելու համար ապրանքային շուկայում պետք ե գտնե ազատ բանվոր, ազատ՝ կրկնակի իմաստով. պետք ե գտնեն այնպիսուն, վոր մի կողմից՝ իբրև ազատ անհատ յուր բանվորական ուժի, իբրև մի ապրանքի, տերն ու տնորենն ե, և մյուս կողմից ուրիշ ապրանքներ չի ծախում, այլ և յուր բանվորական ուժը գործադրելու համար բոլոր անհրաժեշտ իրերից գուրկ ե: Այս հարաբերութիւնը բնական որենքների ներգործութեամբ չե հաստատվում: Բնութիւնը չե ստեղծում մի կողմից՝ փող ու ապրանքներ ունեցող և մյուս կողմից՝ միայն սեփական բանվորական ուժ ունեցող մարդիկ: Միևնույն ժամանակ այս այն-

պիսի մի հասարակական յերեվոյթ ել չե, վոր հատուկ յեղած լինի պատմության բոլոր դարաշրջաններին, այլ պատմական յերկարատեւ գարգացման արգասիք ե, բազմաթիւ տնտեսական հեղաշրջումների, հասարակական արտադրության մի ամբողջ շարք ավելի հին Փորմացիաների անհետանալու հետեւանք:

Կապիտալի յերակետն ապրանքների արտադրությունն ե: Ապրանքների արտադրությունն, ապրանքների ուժգին շրջանառությունն առեւտուրը կազմում են պատմական այն նախադրյալները, վորոնց ներկայության շնորհիւ ծագում ե կապիտալը: Կապիտալի ժամանակակից պատմությունը յուր սկիզբն առնում ե այն որերից, յերբ ժամանակակից համաշխարհային առեւտուրն ու ժամանակակից համաշխարհային շուկան ծնունդ առան տանսվեցերորդ դարում: Գոհնիկ տնտեսագետների այն ցնորքը, վոր իբրեւ թե մի ժամանակ ապրելիս են յեղել աշխատասեր ընտրյալներ, վորոնք հարստություն եյին կուտակում ե մյուս կողմից՝ ծուլլ դատարկապորտներ, վորոնց վոչինչ չի մնացել վաճառքի հանելու, բացի սեփական կաշուց, խելառ հեքյաթ ե, այնքան անհեթեթ, ինչպես նաեւ այն կիսախավարը, վորում բուրժուական պատմաբաններն արտադրության ֆեոդալական յեղանակի վախճանը պատկերացնում են իբրեւ բանավորի ազատագրություն, բայց վոչ միեւնոյն ժամանակ նաեւ արտադրության ֆեոդալական յեղանակի կապիտալիստականի փոխակերպումն: Բանվորները դադարեցին արտադրության միջոցների թվին պատկանելուց, վորպիսիք եյին

ստուկներն ու ճարտերը: Բայց արտադրության միջոցներն ել դադարեցին նրանց, իբրեւ ինքնուրույն տնտեսություն վարող գյուղացիների ու արհեստավորների, պատկանելուց: Մի շարք բռնի ու դաժան միջոցներով, վոր Մարքսը նկարագրում ե Անգլիայի պատմության մեջ կապիտալի սկզբնական կուտակմանը նվիրված գլխում, ժողովրդի լայն մասսաներից խլեցին հողը, կենսամիջոցներն ու աշխատանքի գործիքները: Այս յեղանակով առաջացան ազատ բանվորները, վորոնց կարիքն ե զգում միշտ արտադրության կապիտալիստական յեղանակը: Կապիտալն աշխարհ յեկավ վոտից մինչեւ գլուխ ծածկված արյունով ու կեղտով, վորոնք ծորում եյին նրա բոլոր ծակոտիներից: Յեւ հենց վոր կապիտալն ամբապնդվեց ու վոտքի յելավ, ապա վոչ միայն անշատեց բանվորներին ու աշխատանքի գործադրության համար անհրաժեշտ միջոցների սեփականությունն իրարուց, այլև վերարտադրում ե այս անշատումը անընդհատ առաջընթաց աստիճանով:

Աշխատավարձի փոխարեն կատարվող աշխատանքն անվճար աշխատանքի նախկին յեղանակներից տարբերվում ե նրանով, վոր կապիտալի շարժումն անսահման ե. նրա՝ հավելյալ աշխատանք ձեռք բերելու ազան ձգտումն անհագ ե, կշտում չունի: Տնտեսական հասարակական այն Փորմացիաներում, վորտեղ արդյունքի վոչ թե փոխանակային արժեքն ե զերիշխողը, այլ սպառողականը, այս հավելյալ աշխատանքը սահմանափակվում ե կարիքների ավելի կամ պակաս նեղ կամ լայն շրջանակով. սակայն ար-

տաղրութեան յեղանակից դեռ ևս հավելյալ աշխատանքի անսահման պահանջ չի առաջանում: Գործը բոլորովին փոխվում է այնտեղ, վորտեղ փոխանակային արժեքն է գերիշխող դեր կատարում: Կապիտալն հանդես գալով իբրև ուրիշ մարդկանց աշխատանքով արտադրող, հավելյալ աշխատանք կորզող ու բանավորական ույժը շահագործող՝ յուր յեռանդ վ, անսահմանութեամբ ու գործունեութեամբ սաստիկ գերազանցում է արտադրութեան բոլոր նախկին պրոցեսներին, վորոնք հիմնված էին անմիջորեն պարտադիր աշխատանքի վրա: Նրա համար կարևորն աշխատանքի բուն պրոցեսը չէ, սպառողական արժեքներին արտադրութեանը չէ, այլ արժեքի մեծանալու պրոցեսն է, փոխանակային արժեքների արտադրութեանն է, վորոնցից կարող է ավելի շատ արժեք ստանալ, քան ինքը դրել է գործի մեջ: Հավելյալ արժեքի նկատմամբ ունեցած ազանութեանն անհագ է. փոխանակային արժեքների արտադրութեանը ծանոթ չեն այն սահմանները, վորպիսիք ունի սպառողական արժեքների արտադրութեանը, վոր կարիքների բավարարումով է սահմանափակվում:

Ինչպես վոր ապրանքն սպառողական ու փոխանակային արժեքների միավորումն է, այնպես էլ ապրանքների արտադրութեան պրոցեսն աշխատանքի պրոցեսսի ու արժեք ստեղծելու պրոցեսսի միավորումն է: Արժեք ստեղծելու պրոցեսսը տևում է մինչև այն ըստին, քանի դեռ իբրև աշխատավարձ վճարված՝ բանվորական ույժի արժեքի փոխարեն մի ուրիշ նույնահասար արժեք չէ ստեղծված: Սրանից հետո է,

վոր արժեք ստեղծելու պրոցեսսը դառնում է հավելյալ արժեք արտադրելու պրոցեսս, արժեքի մեծանալու պրոցեսս: Իբրև աշխատանքի պրոցեսսի ու արժեքը մեծացնելու պրոցեսսի միավորումն, այն դառնում է արտադրութեան կապիտալիստական յեղանակ, ապրանքների արտադրութեան կապիտալիստական ձև: Աշխատանքի պրոցեսսում միատեղ մասնակցում են բանվորական ույժն ու արտադրութեան միջոցները. արժեքի մեծանալու պրոցեսսում կապիտալի հենց նույն այս բաղադրիչ մասերն հանդես են գալիս իբրև մշտական ու փոփոխական կապիտալ: Մշտական կապիտալը վերածվում է արտադրութեան միջոցների, հում նյութի, ոժանդակ նյութերի, աշխատանքի գործիքների և արտադրական պրոցեսսում յուր արժեքի քանակը չի փոփոխում: Փոփոխական կապիտալը վեր է անվում բանվորական ույժի և արտադրութեան պրոցեսսում փոխում է յուր արժեքը. այն վերարտադրում է յուր սեփական արժեքն և բացի սրանից նաև մի ավելցուկ, հավելյալ արժեք, վոր կարող է ինքն էլ յուր հերթին փոփոխվել, շատանալ կամ քչանալ: Այս յեղանակով Մարքսն հարթում է յուր ճանապարհը հավելյալ արժեքի ուսումնասիրութեան համար: Նա հավելյալ արժեքի յերկու ձև է վորոշում. բացարձակ ու հարաբերական: Սրանցից յուր քանջյուրն արտադրութեան կապիտալիստական յեղանակի պատմութեան մեջ տարբեր, բայց վճռական դեր է խաղացել:

Բացարձակ հավելյալ արժեքն արտադրվում է շնորհիվ այն հանգամանոի, վոր կապիտալիստը

83



յերկարացնում ե բանվորական ժամանակի տեւո-
ղությունն ավելի, քան այն անհրաժեշտ ե բան-
վորական ուշփի վերարտադրության համար:
Յեթե նրա իշխանությունից կախված լիներ, նա
կերկարացներ բանվորական որը՝ հասցնելով քսան
և չորս ժամի, վորովհետեւ ինչքան յերկար ե
բանվորական որը, այնքան ավելի շատ հավել-
յալ արժեք ե ստեղծվում: Ընդհակառակը, բան-
վորը ճիշտ գիտակցում ե, վոր աշխատանքի
յուրաքանչյուր ժամ, վոր ինքն աշխատում ե
ավելի, քան այն ժամանակը, վոր անհրաժեշտ ե
աշխատավարձի փոխհատուցման համար, անար-
դարությամբ հափշտակում են նրանից: Նրան
վիճակվում ե յուր սեփական կաշու վրա փոր-
ձել, թե ինչ ե նշանակում չափազանց յերկար
ժամանակ աշխատել: Բանվորական որվա տե-
ւողության համար մզվող կռիվն սկսվել ե այն
ժամանակվանից, յերբ առաջին անգամ պատ-
մության մեջ հանդես են յեկել բանվորներն, և
շարունակվում ե մինչեւ մյուսրվան որը: Կապի-
տալիստը կռվում ե յուր վաստակի համար, և
մրցումը հարկադրում ե նրան — լավ մարդ ե
սա անձնուպես, թե վատ, միեւնուեյն ե — յեր-
կարացնելու բանվորական որը մինչեւ մարդկա-
յին աշխատունակության վերջին սահմանները:
Իսկ բանվորը կռվում ե յուր առողջության հա-
մար, պմենորյա մի քանի ժամ հանգստի հա-
մար, վորպեսզի հնարավորություն ունենա բա-
ցի աշխատանքից, սւտելուց ու քնելուց, իրբեւ
մարդ ապրելու: Մարքսը շատ համոզիչ պատ-
կերացնում ե կես դար տեւող քաղաքացիական
պատերազմը — Մեղլիայի կապիտալիստ ու բան-
վոր դասակարգերի միջեւ: Այս պատերազմն

սկսվել ե խոշոր արդյունաբերության ծննդյան
որից, վոր դրդում եր կապիտալիստներին պրո-
լետարիատին շահագործելու նպատակով խորտա-
կելու ընտելյան ու սովորույթների, հասակի ու
սեռի, ցերեկվա ու գիշերվա բոլոր պատվարները,
և վերջացել ե տասժամյա բանվորական որվա
որենքի հրատարակումով: Վերջինս պայքարով
ձեռք բերեց բանվոր դասակարգը, և այն դարձավ
մի անհաղթահարելի հասարակական արգելք, վոր
նույնիսկ իրեն — բանվորին անգամ թույլ չե
տալիս կապիտալի հետ կնքվող կամովին համա-
ձայնության միջոցով մահվան ու ստրկության
մատնվել կապիտալի ձեռքն անձամբ ու սերըն-
դով միասին:

Հարաբերական հավելյալ արժեքն ստեղծվում
ե շնորհիվ այն պարագայի, վոր բանվորական
ուշփի վերարտադրության համար անհրաժեշտ
ժամանակի աշխատանքը կրճատվում ե հողուտ
հավելյալ աշխատանքի: Բանվորական ուշփի ար-
ժեքն ընկնում ե այն պատճառով, վոր աշխա-
տանքի արտադրող ուշփն ավելացնում են ար-
դյունաբերության այն ճյուղերում, վորոնց ար-
դյունքներով վորոշվում ե բանվորական ուշփի
արժեքը: Այս բանի համար անհրաժեշտ ե ար-
տադրութան յեղանակներն, այլեւ աշխատանքի
պրոցեսսի տեխնիքական ու հասարակական պայ-
մաններն անընդհատ կերպարանափոխել ու դար-
գացնել: Սրանից հանած տնտեսական, պատմա-
կան, տեխնիկական ու սոցիալ-հոգեբանական
այն յեզրակացությունները, վոր արել ե Մարք-
սը կոտպերացիային, աշխատանքի բաժանմանը,
մանուֆակտուրային ու խոշոր արդյունաբերու-

թյանը նվիրած մի շարք դուրսերում, նույն իսկ բուրժուական գիտնականներն համարում են հարուստ գանձ, վոր մուծել և նա գիտության շտեմարանը:

Մարքան ապացուցում է, վոր մեքենաներն ու խոշոր արդյունաբերությունը վոչ միայն առաջ բերին բանվորների մի այնպիսի վոյսրմելի գրություն, վոր մինչեվ այն ժամանակ դոլություն չեր ունեցել արտադրության վոչ մի ուրիշ յեղանակի ընթացքում, այլ վոր նրանք կապիտալիստական հասարակությունն անընդհատ հեղափոխելով՝ հասարակարգի մի ավելի բարձր ձեւ են նախապատրաստում: Գործարանային որենսդրությունն հասարակության առաջին գիտակից ու ծրագրված ազդեցությունն է արտադրական պրոցեսի հակաբնական կազմակերպության վրա: Գործարանների ու մանուֆակտուրային հիմնարկների միջի աշխատանքը կարգավորելով՝ այս որենսդրությունն ամենից առաջ հանդես է գալիս իրելով միջամտություն կապիտալի շահագործած ասպարեզում:

Սակայն իրողությունների ույժն հարկազրում է, վոր որենսդրությունը կարգավորե նաեւ տանը կատարվող աշխատանքներն ու նույնիսկ միջամտե ծնողական իշխանության ասպարեզն և հենց սրանով ել խոստովանե, թե խոշոր արդյունաբերությունը հին բնտանեկան կազմի ու համապատասխան ընտանեկան աշխատանքի տրտեսական հիմքերը խորտակելով՝ խորտակում է նաեւ հին ընտանեկան հարաբերությունները: «Վորքան ել սարտափելի ու գգվելի թվա ընտանեկան հին հարաբերությունների խորտակումը

կապիտալիստական սխաեմի ժամանակ, այնուամենայնիվ խոշոր արդյունաբերությունը շնորհիվ այն դրական գերի, վոր ընձեռում է կանանց, անշափահասներին ու յերեխաներին արտադրության հասարակականորեն կազմակերպված պրոցեսներում, տնային շրջանակից դուրս, նոր տնտեսական հիմունք և ստեղծում ընտանիքի ու յերկու սեռերի հարաբերությունների ավելի բարձր ձեւերի համար: Հասկանալի յե, վոր ընտանիքի քրիստոնեա-դերմանական ձեւը բացարձակ համարելը նույնքան անհեթեթ բան է, վորքան և հին-հռոմեականը, հին-հունականը կամ արեւելյանը, վորոնք, ի դեպ, բոլորը միասին առած գարգացման առաջխաղաց ձեւերի մի շարք են կազմում: Պարզ է նմանապես, վոր յերկու սեռի ու ամենատարբեր հասակի անհատներից կազմված հավաքական բանվորական պրոսոնայի կազմն համապատասխան պայմաններում պետք է մարդկային զարգացման ազդուր գառնա, թեեւ նրա կապիտալիստական բիրտ ձեւը, վորտեղ բանվորն և ծառայում արտադրության պրոցեսին և վոչ թե արտադրության պրոցեսը՝ բանվորին, բարեյական ապականության ու ստրկության ազդուր է: Մեքենան, վոր բանվորին ցած է իջեցնում մինչեվ մեքենայի մի սոսկ մասնիկը, կցորդը լինելու աստիճանը, միջեմնոյն ժամանակ հնարավորություն է ստեղծում հասարակության արտադրող ույթերը բարձրացնելու ավելի բարձր աստիճան, վոր հասարակության բոլոր անդամներին միակերպ մարդկային զարգացման հնարավորություն կտա, այն ինչ նախկին հասարակական ձեւերն այս անելու համար չափազանց աղքատ էլին:

Քացարձակ ու հարաբերական հավելյալ արժեքի արտադրութիւնը պարզելով Մարքսը շարադրում է աշխատավարձի առաջին բանային (рациональная) թեորիան, վորպիսին հայտնի է քաղաքատնտեսութեան պատմութեան մեջ: Ապրանքի գինը նրա արժեքն է՝ փողով արտահայտած, իսկ աշխատավարձը, բանվորական ուժի գինն է: Ապրանքային շուկայում վոչ թե աշխատանքն է ստպարեզ գալիս, այլ բանվորը վաճառում է յուր բանվորական ուժը. իսկ աշխատանքն առաջանում է բանվորական ուժի կոչվող սպրանքի սպառման միջոցով: Աշխատանքն արժեքի եռութիւնն ու անկապտելի չափն է, բայց ինքն արժեք չունի: Սակայն այն պատճառով է թվում, վոր իբրեւ թե աշխատանքի վճարըն է աշխատավարձը, վորովհետեւ բանվորը յուր վարձն ստանում է կատարած աշխատանքից հետո միայն: Աշխատավարձի ձեւը վոչնչացնում է բանվորական ուրը վճարված ու անվճար աշխատանքի բաժանելու բոլոր հետքերը: Այս հակառակն է այն բանի, վոր տեղի է ունենում ստրկութեան սիստեմի ժամանակ: Ստրուկն աշխատում է լոկ յուր տիրոջ համար նայել բանվորական որվա այն մասի ընթացքում, վորի ժամանակ նա լրացնում է յուր կենսական պահանջի արժեքը միայն: Նրա ամբողջ աշխատանքն անվճար աշխատանք է թվում: Իսկ վարձու աշխատանքի ժամանակ, բնդհակառակը, նույնիսկ անվճար աշխատանքը թվում է վճարված: Այնտեղ սեփականութեան հարաբերութիւնները թաղցնում են ստրուկի՝ յուր համար կատարած աշխատանքը, իսկ այստեղ փողային հարաբերութիւնները վարագուրած են

պահում վարձու բանվորի ձրի աշխատանքը: Հետեւաբար, հասկանալի է, — ասում է Մարքսը, — թե ինչու այնքան կարեւոր է բանվորական ուժի արժեքի ձեւի ու գնի՝ աշխատավարձ կամ նույն ինքն աշխատանքի արժեք ու գին դառնալը: Արտահայտելու հենց այս ձեւի վրա, վոր վարագուրում է իրական հարաբերութիւններն ու միանգամայն սրանց հակառակը ցույց տալիս, հիմնվում են ինչպես բանվորի, այնպես և կապիտալիստի բոլոր իրավական պատկերացումները, արտադրութեան կապիտալիստական յեղանակի բոլոր կեղծավորութիւնները, ազատութեան մասին ունեցած կապիտալիստական բոլոր պատրանքները, դոեհիկ քաղաքատնտեսութեան բոլոր արդարացնող խորամանկ փաստաբանութիւնները:

Աշխատավարձի յերկու հիմնական ձեւերն են ժամանակավարձն ու հատավարձը: Ժամանակավարձի որենքների միջոցով Մարքսն ապացուցում է, թե վորքան շահագիտական ու դատարկ են Փրագներն այն մասին, վոր իբր թե բանվորական ուրը կարճացնելու հետեւանքը պետք է լինի աշխատավարձի անկումը: Ծիշտ ընդհակառակն է ուղիղը: Բանվորական ուրը ժամանակավորապես կարճացնելը ձգում է աշխատավարձը, բայց մշտական կրճատումը բարձրացնում է այն. վորքան յերկարատեւ է բանվորական ուրն, այնքան ցածր է աշխատավարձը:

Հատավարձը վոչ այլ ինչ է, յեթե վոչ ժամանակավարձի փոխակերպված մի ձեւը. այս՝ աշխատավարձի մի ձեւ է, վոր ամենից ավելի է հարմար արտադրութեան կապիտալիստական

յեզանակին: Այս ձեզն աժեհտարայն չափերով կիրարկվել սկսեց մանուֆակտուրայի բուն ծագման ժամանակ, և անգլիական խոշոր արդունաբերութեան «փոթորկի ու գրոհի» շրջանում ծառայեց իբրև լծակ բանվորական ժամանակը յերկարացնելու ու աշխատավարձը կրճատելու համար: Հատավարձը կապիտալիստին ամենից ավելի է ձեռնառու, վորովհետև նշանավոր չափով ավելորդ է դարձնում աշխատանքի վրա հսկելը և բացի սրանից բազմաթիվ սուբստանսներ և ստեղծում աշխատավարձից մի բան կտրելու ու ամեն տեսակի խաբերայութեաններէ համար: Բանվորներին, ընդհակառակը, մեծ վնաս է տալիս այն. հատավարձի շնորհիվ խորամանկութեամբ նրանցից ծծում են չափազանց շատ աշխատանք, վորը նրանց աշխատավարձը բարձրացնելու փոխարեն ձգտում և փաստորեն այն ցածացնելու, ուժեղանում է մրցումը բանվորների միջև և թուլանում է նրանց համերաշխութեան դատարանը. կապիտալիստների ու բանվորների արանքը սողոսկում են ատանձին կատեգորիայի մակարոյծներ, միջնորդներ, վորոնք վճարելի աշխատավարձից իրանց համար կորզին կտոր են պոկում հայրն:

Հավելյալ արժեքի ու աշխատավարձի հարաբերութեանն այնպես է, վոր արտադրութեան կապիտալիստական յեզանակը վոչ միայն կապիտալիստի համար նորից վերարտադրում է նրա կապիտալը, այլև շարունակ նորից աղբատութեան է բերում բանվորներին. մի կողմում կանգնում են կապիտալիստները, վորոնք բոլոր կենսամիջոցների, ամբողջ հում նյութի, աշխատանքի բոլոր գործիքների տերն են, իսկ

մյուս կողմում—հսկայական մասսան բանվորներին, վորոնք հարկադրված են իրենց բանվորական ույժը ծախելու այդ կապիտալիստներին կենսամիջոցների այնպիսի քանակով, վորը լավագույն դեպքում բավական կլինի բանվորների աշխատունակութեանը պահպանելու և աշխատունակ պրոլետարների նոր սերունդ կրթելու համար: Բայց կապիտալը վոչ միայն սոսկ վերարտադրում է, այլև շարունակ մեծանում ու բազմապատկվում է. «կապիտալի» հենց այս «կուտակման պրոցեսին» և նվիրում Մարքսը սուաջին հատորի վերջին գլուխը:

Վոչ միայն հավելյալ արժեքն է ծագում կապիտալից, այլև կապիտալն է սուաջանում հավելյալ արժեքից: Ունեվոր դասակարգերն ամեն տարի արտադրվող հավելյալ արժեքի մի մասը բաշխում են իրար միջև և կլանում են իբրև հասույթ, իսկ մյուս մասը կուտակվում է իբրև կապիտալ: Այն անվճար աշխատանքը, վոր դուրս են քաշում բանվոր դասակարգից, միջոց է ծառայում ել ավելի շատ անվճար աշխատանք դուրս ծծելու համար: Արտադրութեան հոսանքի մեջ ընդհանրապես նախնաբար ծախսված (դործադրված) յուրաքանչյուր կապիտալ լինում է մի չքացող մեծութեան, յերբ այս համեմատում ենք անմիջապես կուտակված կապիտալի հետ, այսինքն նորից կապիտալ դարձող հավելյալ արժեքի կամ հավելյալ արդյունքի հետ, վորոնք ընկնում են արդեյոք միևնույն ձեռքը, վոր կապիտալ է կուտակում, թե այլ ձեռք, այս նշանակութեան շունի: Ապրանքների արտադրութեան ու շրջանառութեան վրա

հիմնվող մասնավոր սեփականությունը որինքը
յուր ներքին, անխուսափելի ղիալեկտիկայի մի-
ջոցով յուր լիակատար հակադրությունն է փո-
խակերպվում: Ապրանքային արտադրություն
որենքներն իբրև թե սեփական աշխատանքի
վրա եին հիմնում սեփականության իրավունքը:
Միայն իրավահավասար ապրանքատերերն եին
հակադրվում իրար, ընդ վորում ուրիշ անհատ-
ների ապրանքներին տիրելու միջոց կարող եր
լինել միայն ոտարումը (отчуждение) սեփական
ապրանքի, իսկ վերջինս կարող եր միայն աշ-
խատանքով արտադրվել: Իսկ այժմ սեփակա-
նությունը կապիտալիստի կողմից դառնում է
ուրիշի անվճար աշխատանքին կամ սրա արդյուն-
քին տիրելու իրավունք, իսկ բանվորի կողմից՝
յուր սեփական արդյունքին տիրելու անկարե-
լիություն:

Յերբ ժամանակակից պրոլետարիատն սկսեց
այս առնչությունն հասկանալ, յերբ քաղաքա-
յին պրոլետարյատը լիոնում սկսեց ահազանգն
հնչեցնել, իսկ յերկրագործական պրոլետարիա-
տըն ել սկսեց բաց թողնել կարմիր աքաղաղին,
այն ժամանակ վուլգար քաղաքատնտեսներն
հնարեցին «ժուժկալություն» թեորեան, բստ վո-
րի կապիտալն իբրև թե ծագում է կապիտա-
լիստների կամավոր ժուժկալություն շնորհիվ:
Մարքսն այս թեորեան այնքան խիստ գատա-
փետեց, վորքան խիստ նրանից առաջ գատա-
փետել եր Լասսալը: Մակայն իրապես կապի-
տալի կուտակմանն ուրիշ բան չի նպաստում,
բայց յեթե բանվորների հարկադրված «ժուժ-
կալությունը», աշխատավարձը՝ բռնի կերպով

բանվորական ույժի արժեքից ցած ձգելը, վոր
կատարվում է այն նպատակով, վոր բանվորի
համար անհրաժեշտ սպառողական ֆոնդը կա-
պիտալի կուտակման ֆոնդ դառնա:

Այս է ահա այն իսկական աղբյուրը, վո-
րից բխում են բանվորների «փառահեղ» կյան-
քի մասի շրջող գանգառները, անվերջ հանդի-
մանություններն այն մի շիշ շամպայնի մասին,
վոր իբրև թե մի անգամ քարտաշ բանվորները
խմել են նախաճաշին, այլ և քրիստոնեական
սոցիալ—բեֆորմատորների եժանագլին խոհ-
նոցային դեղատոմսերն ու մնացած ամեն բան
կապիտալիստական կշկշոցի ասպարեզից:

Կապիտալիստական կուտակման ընդհանուր
որենքն այսպես է: Կապիտալի աճումը յուր
մեջ ամփոփում է նաեվ նրա փոփոխական մա-
սի կամ բանվորական ույժի փոխակերպվող մա-
սի աճումը: Յեթե կապիտալի կազմն անփոփոխ
է մնում, յեթե արտադրություն միջոցների մի
վորոշ քանակ շարժողություն մեջ զրկելու հա-
մար միշտ պահանջելու է բանվորական ույժի
միեմլունքն քանակը, ապա ակնհայտ է, վոր աշ-
խատանքի պահանջը կշատանա և սրա համապա-
տասխան ել բանվորների ապրուստի ֆոնդը
կմեծանա կապիտալի համեմատ, ընդ վորում
այս ֆոնդի աճումն այնքան ավելի արագ կը-
կատարվի, վորքան ավելի արագ կաճե կա-
պիտալը: Ինչպես վոր հասարակ վերարտա-
դրությունը շարունակ վերարտադրում է կապի-
տալիստական հարաբերությունն, այնպես ել կա-
պիտալի կուտակումը վերարտադրում է կապի-
տալիստական հարաբերությունն ավելի լայն չա-
փերով: Վորքան շատ են կամ վորքան խոշոր են

կապիտալիստները մի բեվեռում, այնքան շատ են վարձու բանվորները մյուս բեվեռում: Այսպիսով կապիտալի կուտակումը պրոլետարիատի բազմանալ է նշանակում, և տվյալ դեպքում այս կատարվում է բանվորների համար ամենից ավելի բարենպաստ պայմաններում: Մրանց սեփական հավելյալ արժեքից, վոր հետզհետե ավելի ու ավելի է աճում և աճելով դառնում նոր կապիտալ, դեպի բանվորներն հեռ հոսելով նրանց կվերագառնա ավելի մեծ մասն իբրև վճարման միջոցներ: Այս հանդամանքի շնորհիվ բանվորները կարող են ավելի բնդարձակել իրենց բավականութունների շրջանակն և ավելի լավ կարգի դնել զգեստի, կահապարասի և այլ առարկաների սպառողական ֆոնդը: Բայց այս բոլորն ամենեվին չեն փոխում այն կախյալ վիճակը, վորում գտնվում են բանվորները, ճիշտ այնպես, ինչպես լավ հագնված ու լավ սնվող ստրուկն ստրուկ լինելուց չի դադարում: Նրանք այնուամենայնիվ պարտական են վորոշ քանակությամբ անվճար աշխատանք մատակարարելու. այս քանակը կարող է նույնիսկ կրճատվել, բայց աս կրճատումն յերբեք չի հասնի այն աստիճանին, վոր արտադրական պրոցեսսի կապիտալիստական բնույթը լուրջ վտանգի յենթարկվի: Յեթե աշխատավարձը սրանից վեր է բարձրանում, այն ժամանակ վաստակ ստանալու դրդապատճառը բթանում է, և կապիտալի կուտակումը թուլանում է մինչևի այն ժամանակ, յերբ աշխատավարձը նորից բնկնելով կհասնե այն մակարդակին, վոր համապատասխանում է կապիտալի՝ արժեքը մեծացնելու պահանջին:

Յեւ միայն այն ժամանակ, յերբ կապիտալի կուտակման դեպքում նրա բազադրիչ փոփոխական ու մշտական մասերի հարաբերությունը չի փոփոխվի, միմիայն այն ժամանակ մի քիչ կթուլանա այն վոսկե շղթայի շրջագիծն ու ծանրությունը, վորով վարձու բանվորները կաշկանդում էյին իրանց: Սակայն իրապես կապիտալի կուտակման հեռ միաժամանակ խոշոր հեղափոխություն է կատարվում կապիտալի որդանական կազմի մեջ, ինչպես այս կոչում է Մարքսը: Մշտական կապիտալն աճում է ի հաշիվ փոփոխական կապիտալի. աշխատանքի աճող արտադրողականությունն հասցնում է այն բանին, վոր արտադրության միջոցների մասսան ավելի արագ է աճում, քան նրանցում ամփոփված (= նրանց գործադրող. թ. Ա.) բանվորական ույժը: Աշխատանքի պահանջը չի մեծանում կապիտալի կուտակման հավասար չափով, այլ համապատասխան չափով ընկնում է: Ուրիշ ձեւով, սակայն միյնվույն ազդեցությունն է գործում կապիտալի կենտրոնացումը, վորը կապիտալի կուտակումից անկախ՝ առաջանում է նաեւ նրանից, վոր կապիտալիստական մրցության որենքները շնորհիվ փոքր կապիտալը կուլ է գնում մեծերի բերանը: Մինչդեռ զարգացող կուտակման ժամանակ յերեվան յեկող կապիտալի հոսանքն յուր մեծության համեմատ ավելի ու ավելի փոքրաթիվ բանվորներ է քաշում գործի մեջ, նոր կազմով վերարտադրված հին կապիտալն ավելի ու ավելի է գուրս հրում այն բանվորներին, վորոնք աշխատում էյին նրա արտադրության մեջ: Այսպի-

սով կազմվում է հարաբերական, այսինքն կապիտալի արժեքը մեծացնելու տեսակետից ավելորդ բանվոր ազգաբնակիչություն, մի տեսակ՝ աշխատանքի արդյունաբերական պահեստազոր: Արդյունաբերություն վատ կամ միջակ վիճակի ժամանակաշրջաններում այս արդյունաբերական պահեստազորը յուր բանվորական ույժի արժեքից ցած աշխատավարձ կստանա և մշտական աշխատանք չի ունենա, կամ թե չէ իրրեվբեռ կծանրանա հասարակական խնամատարություն վրին և բոլոր պարագաներում էլ նա միջոց կծառայե զբաղմունք ունեցող բանվորների դիմադրությունը թուլացնելու կամ նրանց աշխատավարձը ցած մակարդակի վրա պահելու համար:

Յեթե արդյունաբերական պահեստազորն հանդես է գալիս իբրև արդյունք հարստության զարգացման ու կուտակման, վոր անդի է ունենում կապիտալիստական հիմքի վրա, ապա մյուս կողմից այն դառնում է արտադրության կապիտալիստական յեղանակի լծակ: Կապիտալի կուտակմանն ու սրան ուղեկցող՝ աշխատանքի արտադրողականության զարգացմանը զուգընթաց աճում է նայել կապիտալի՝ հանկարծակի ընդլայնվելու ընդունակությունը: Սրան այժմ հարկավոր են մարդկային մեծ զանգվածներ այն բանի համար, վոր մի անգամից ու ստանց մյուս ասպարեզներում արտադրության ընթացքը դադարեցնելու՝ այն մասսաները շարտե դեպի նոր շուկաներ ու արտադրության նորանոր ճյուղեր: Փամանակակից արդյունաբերության զարգացման բնորոշ ընթացքը, տանամյա

շրջանները (ցիկլ), վորոնք ընդհատվում են փոքրիկ տատանումներով միայն և վորոնց ժամանակ հերթով իրար են հաջորդում չափազանց լարված արտադրության, միջակ կենսունակության, ճգնաժամերի ու դադարի ժամանակաշրջանները, հիմնվում են այն բանի վրա, վոր արդյունաբերական պահեստազորն անընդհատ կազմվում, շատ կամ քիչ կլանվում ու այնուհետև նորից է կազմվում: Վորքան մեծ չափերի յե հասնում հասարակական հարստությունը, գործամուխ (ֆյուկ-պիոնիրյուսիյ) կապիտալը, սրա աճման ծավալն ու յեռանդը, հետևաբար նայել բանվոր ազգաբնակչության քանակի մեծությունն ու նրա աշխատանքի արտադրիչ ույժն, այնքան ավելի մեծ է լինում հարաբերական գերբնակչությունը կամ արդյունաբերական պահեստազորը: Սրա համեմատական մեծությունն աճում է հարստության գործության մեծանալուն զուգընթաց: Բայց վորքան ավելի յե շատանում արդյունաբերական պահեստազորը բանվորական գործող բանակի համեմատությունում, այնքան ավելի բազմաթիվ են դառնում այն բանվորական խավերը, վորոնց աղքատությունն հակառակ հարաբերական է նրանց տանջալից աշխատանքի վերաբերությունում: Վերջապես վորքան մեծ լինի բանվոր դասակարգի մուրացիլի վիճակ ունեցող շերտն ու արդյունաբերական պահեստազորն, այնքան ավելի շատ կլինի պաշտոնական չբավորությունը (պաուպերիզմ):— Այսպես է կապիտալիստական կուտակման բացարձակ ընդհանուր որենքը:

Այստեղից էլ ծագում է նույնպես նրա պատմական ընթացքը: Կապիտալի կուտակմանն

ու կենտրոնացմանը զուգընթաց զարգանում է նայել աշխատանքի սրբոցեսսի կոոպերատիվ ձեւը՝ ավելի ու ավելի բարձր աստիճանի հասնելով, ինչպէս և զարգանում է նմանապէս տեխնիկական գիտելիքների գիտակից կիրարկումը, հողի ընդհանուր պլանաչափ մշակումը, աշխատանքի գործիքների փոխակերպումն այնպիսիների, վորոնք կարող են կիրարկվել միայն ընդհանուր ջանքերով և վերջապէս արտադրութեան բոլոր գործիքների տնտեսումը շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանք կիրարկվում են իբրեւ միացյալ հասարակական աշխատանքի ընդհանրական գործիքներ: Կապիտալիզմի վեհապետների թվի կրճատմանը զուգընթաց, վեհապետներ, վորոնք հափշտակում են ու մենաշնորհ են դարձնում արտադրութեան գործիքների ու յեղանակի փոխակերպման այս սրբոցեսսի բոլոր ոգուտները, աճում է կարիքի, ճնշման, ստրկացման, ստորացման ու շահագործման քանակն եւ: Սակայն սրա հետ միաժամանակ մեծանում է նայել վրդովմունքը բանվոր դատակարգի, վոր շարունակ բազմանում է քանակապէս և արտադրութեան կապիտալիստական յեղանակի մեխանիզմի միջոցով մարդվում կարգապահութեան մեջ, միանում ու կազմակերպվում: Կապիտալի մենաշնորհը դառնում է կապանք արտադրութեան համար, վորը մի ժամանակ փթթում, ծաղկում էր նրա հովանու ներքո: Արտադրութեան միջոցների կենտրոնացումն ու աշխատանքի հանրայնացումը (обобществление) հասնում են այն կետին, յերբ նրանք այլեւս անհանգուրժելի յեն իրենց կապիտալիստական

պայտանով: Հնչում է կապիտալիստական մասնավոր սեփականութեան ժամը, և եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յեն յենթարկում:

Այն ժամանակ նորից կվերականգնվի անհատական, սեփականութունը, անձնական աշխատանքի վրա հիմնված սեփականութունը, սակայն կապիտալիստական դարաշրջանի նվաճումների պատվանդանի վրա կանգնելով, այն ե՛հանդես գալով ազատ բանվորների կոոպերացիայի կերպարանքով և հողի ու արտադրութեան միջոցների ընդհանրաբար տիրապետութեան կերպարանքով, միջոցներ, վոր ստեղծել է նույն ինքն աշխատանքը: Իրապէս արդեն արտադրութեան հասարակական բնույթի վրա հիմնված կապիտալիստական սեփականութեան փոխակերպումը հանրային սեփականութեան, իհարկե, այնքան յերկարատեւ ու դժվար չէ ամենեւին, ինչպէս առանձին անհատների սեփական աշխատանքի վրա հիմնված ու բազմաթիւ մարդկանց միջեւ բաժանված սեփականութեան փոխակերպումը կապիտալիստական սեփականութեան: Այնտեղ ազգաբնակչութեան մասսան եքսպրոպրիացիայի եր յենթարկվում հոգուտ սակավաթիւ բռնակալների, իսկ այստեղ խոսքը վերաբերելու յե մի քանի բռնակալների՝ ժողովրդական մասսայի ձեռքով եքսպրոպրիացիայի յենթարկելուն:

ՌՈԶԱ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ

«ԿԱՊԻՏԱԼԻ» ՅԵՐԿՐՈՐԴ ՈՒ ՅԵՐՐՈՐԴ
ՀԱՏՈՐՆԵՐԸ

Մարքսն հույս ուներ, վոր «Կապիտալի» այս հատորները կարող է հրատարակել առաջինից անմիջապես հետո, բայց յերկար տարիներ անցան, և նրան այլևիս արդեն չհաջողվեց ավարտել այն հատորները տպագրութեան տալու համար:

Լրացուցիչ ու ավելի խոր հետազոտութեանները, յերկարատեւ հիմնադրութեաններն ու վերջապես մահը խանգարեցին Մարքսին յուր աշխատութեանը վերջնական կերպարանք տալու, և հետո միայն Ենդելսը կազմեց վերջին յերկու հատորը յուր ընկերոջ թողած անավարտ ձեռագրերից: Այս ձեռագրերը գրի առած բաներ, թուուցիկ ուրվագծեր ու նկատողութեաններ էյին, մերթ իրար հետ կապակցված մեծ բաժիններ, մերթ համառոտ գծված ու սեփական գործածութեան համար արված գիտողութեաններ, մի խոսքով՝ մտավոր վիթխարի աշխատանք, վոր շատ կամ քիչ աչքի ընկնող ընդհատումներով շարունակվել է մի մեծ ժամանակաշրջան 1861 թվից մինչեւ 1878 թիվը:

Այս հանգամանքները ցույց են տալիս, վոր «Կապիտալի» վերջին յերկու հատորում չպետք է փնտռել քաղաքատնտեսութեան բոլոր կարեւորագույն առեղծվածների լիավարտ ու պատ-

րաստի վճիռներ. այս հատորներում մասամբ միայն առաջադրված են այս առեղծվածներն, և ցուցումներ կան այն մասին, թե ինչ ուղղութեամբ պետք է վորոնել նրանց լուծումները: Ինչպես Մարքսի ամբողջ աշխարհայացքն, այնպես և նրա հիմնական աշխատութեանը մի Սուրբ Գիրք չէ, վոր լի է պատրաստի, մի անգամ ընդ միշտ արտահայտված վերջնական ճշմարտութեաններով: Սակայն այս յերկը մի անսպառ աղբյուր է ընթերցողներին զրդելու մտավոր նոր աշխատանքի, հետագա հետազոտութեանների ու ճշմարտութեան համար մղվելիք հետագա կուլի:

Միեւնույն հանգամանքները բացատրում են նույնպես, վոր իրենց արտաքին գրական ձեւով ել յերկրորդ ու յերրորդ հատորներն այնպես ավարտված չեն, նրանց մեջ խելքն այնպես չէ փայլում ու շողշողում, ինչպես առաջին հատորում: Սակայն և այնպես մտքի անմիջական աշխատանքի շնորհիվ, վոր գերծ է շարագրանքի ձեւի մասին ամեն մի հոգսից, այս հատորները շատ ընթերցողներին ել ավելի մեծ հաճույք են պատճառում, քան առաջին հատորը: Բովանդակութեան կողմից այս յերկու հատորն առաջին հատորի լրացումն ու հետագա զարգացումն են կազմում և անհրաժեշտ են ամբողջ սխտեմն հասկանալու համար: Ափսոս, վոր այս հատորները մինչեւ այժմ ժողովրդականացրած ձեւով վերաշարադրված չեն, ուստի և լուսավորված բանվորների լայն մասսաներին անծանոթ են մնում:

Առաջին հատորում Մարքսն զբաղվում է քաղաքատնտեսութեան հիմնական խնդրով, թե վորտեղից է ծագում հարստութեանը, վորտեղ

ե վաստակի աղբյուրը: Մինչեւ Մարքսի հանդես գալն այս հարցումն եւ ի պատասխանը տալիս ելին յերկու ուղղութեամբ:

«Իխտական» պաշտպաններն աշխարհներէց լավագուշն այս աշխարհի, վորում ապրում ենք, մարդիկ, վորոնք մասամբ վայելում եյին բան-վորների հարգանքն ու վստահութիւնը, ինչպես որինակ, Շուլցե - Դելիշը, կապիտալիստական հարստութիւնը բացատրում եյին մի շարք, ավելի կամ պակաս չափով թուլատրելի, արդարացնող կշռագատութիւններով ու խորամանկ ձեռնածութիւններով և ասելով, թե այս հարստութիւնն հետեւանք ե պարանքների գները սիստեմատիկ բարձրացնելու, վոր կատարվում ե ձեռնարկողին վարձատրելու նպատակով այն բանի համար, վոր նա ազնվորեն արտադրութեան համար տրամադրել ե յուր կապիտալը. թե այս հարստութիւնը մի հատուցումն ե այն «ռիսկի» փոխարեն, վորին յենթակա ե լինում ամեն ձեռնարկող. թե այն մի վարձ ե, վոր տրվում ե ձեռնարկութեան հոգեվոր դեկավարութեան համար և այլն: Այս բացատրութիւնները վերջիվերջո հանգում եյին մի բանի. արդարացելու վրանց հարստութիւնն ու մյուսների ազդատութիւնն իբրեւ մի «արդար», ուրեմն և անխուսափելի յերեւոյթ:

Մրանց հակառակ, բուրժուական հասարակութեան քննադատները, մասնավորապես սոցիալիստական այն դպրոցները, վորոնք նախատում եյին Մարքսին, կապիտալիստների հարըստանալը բացատրում եյին իբրեւ գուտ լաբե-բայութիւն կամ գողութիւն բանվորներից, վոր

հնարավոր ե դառնում փողի գոյութեան շնորհիվ կամ արտադրական պրոցեսի կազմակերպված շլինելու պատճառով: Այստեղից այս սոցիալիստներն անցնում եյին շահագործումը չբացնելու դանադան ուտոպիկ ծրագրերի՝ փողը վերացնելու, «աշխատանքը կազմակերպելու» և այլ միջոցներով:

«Կապիտալի» առաջին հատորում Մարքսը ցույց ե տվել կապիտալիստական հարստացման իրական արմատները: Նա վոչ կապիտալիստների հարստութիւնն արդարացնելու փորձերով ե զբաղվում, վոչ ել անարդարութեան համար նրանց մեղադրելով. առաջին անգամ նա ե ցույց տալիս, թե ինչպես ե ծագում վաստակն և ինչպես ե այն ուղղվում դեպի կապիտալիստների գրպանը:

Այս բանը նա բացատրում ե տնտեսական յերկու վճռական իրողութիւններով. առաջին նրանով, վոր բանվոր մասսան կազմված ե պրոլետարներից, վորոնք հարկադրված են իրենց բանվորական ույժն իբրև ապրանք ծախելու և յերկրորդ՝ նրանով, վոր այս ապրանքը, բանվորական ույժը ներկայումս այն աստիճան արտադրողականութիւն ունի, վոր կարող ե վորոշ ժամանակվա մեջ շատ ավելի արդյունք արտադրել, քան անհրաժեշտ ե նույն միջոցին նրա սեփական գոյութիւնը պահպանելու համար: Այս յերկու գուտ տնտեսական իրողութիւնների շնորհիվ, վորոնք սակայն որչեղտիվ պատմական զարգացման հետեւանք են, պրոլետարների աշխատանքով ստեղծված պտուղներն իրանց իրանց ընկնում են կապիտալիստների ձեռքը և աշխա-

տավարձի սիստեմի շարունակման պատճառով մեքենաբար կուտվում և կազմում են կապիտալի վիթխարի ու հետզհետե ավելի ու ավելի մեծացող պաշարներ:

Այսպիսով Մարքսի բացատրութեամբ կապիտալիստական հարստացումը վոչ թե մի հատուցում է, վոր տրվում է կապիտալիստներին սրանց յերեվակայական գոհաբերությունների ու բարերարությունների համար, վոչ ել խաբեբայություն է կամ գողություն բառի սովորական նշանակութեամբ, այլ քրեյական իրավունքի տեսակետից միանգամայն իրավացի մի փոխանակային գործարք, վոր տեղի յե ունենում կապիտալիստի ու բանվորի միջեվ և վորը կատարվում է ճիշտ միեվնույն որենքներով, վորով կատարվում է ամեն մի այլ տեսակի առ ու ծախս: Կապիտալիստներին վոսկե պտուղներ բերող այս անբիծ գործարքը լուսաբանելու համար Մարքսը պետք է մինչև վերջը զարգացներ արժեքի որենքը, վոր 18-րդ դարի վերջին ու 19-րդի սկզբին սահմանել էին Անգլիայի մեծ կլասիկները — Մմիտն ու Ռիկարդոն. ուրիշ խոսքով՝ Մարքսը պետք է բացատրեր ազրոնքային փոխանակութեան ներքին որենքներն ու սրանք կիրարկեր մի այնպիսի առանձնահատուկ ազրանքի վերաբերմամբ, վորպիսին եր բանվորական ույժը: Որենքն արժեքի, վորից բխում են աշխատավարձն ու հավելյալ արժեքը, ուրիշ խոսքով՝ բացատրությունն այն բանի, թե ինչպե՞ս վարձու աշխատանքի արդյունքն սուանց վորեմե բռնութեան ու խաբեբայութեան ինքն իրան բաժանվում է բանվորների գոյությունը պահ-

պանող ազքատիկ միջոցների ու կապիտալիստի հարստութեան, վոր առաջանում է առանց վերջինիս կողմից աշխատանք գործադրելու, — ահա «Կապիտալի» առաջին հատորի գլխավոր բովանդակությունը: Յեվ այս հատորի պատմական մեծ նշանակութեունը շարադրանքն է այն բանի մասին, թե շահագործումը կվերանա այն ժամամանակ միայն, յերբ վոչնչացած կլինի բանվորական ույժի վաճառքն, այսինքն վարձու աշխատանքի սիստեմը:

«Կապիտալի» առաջին հատորում մենք միշտ գտնվում ենք բանվորի գործանոցում — գործարանում, հանքահորում կամ ժամանակակից գյուղատնտեսական արտադրութեան մեջ: Այն յեղրակացությունները, վորոնց հանգում է Մարքսը, իրական են յուրաքանչյուր կապիտալիստական ձեռնարկութեան համար: Այս հատորում խոսքը միայն մասնավոր կապիտալի մասին է, իբրեմ ամբողջ արտադրական պրոցեսի տիպի: Այս հատորը կարգալուց հետո պարզվում է վաստակի ամենորյա ծագումն և շահագործման ամբողջ մեխանիզմը մինչև խորքերը լուսաբանվում է: Ամեն տեսակի ազրանքների լեռնանման կույտեր մեր առաջ ընկած են այնպես, ինչպես գուրս են գալիս գործանոցից, դեռ յեմ թրջված՝ բանվորների քրախնքով, և նրանց բոլորի մեջ ել մենք կարող ենք պարզ գանազանել նրանց արժեքի այն մասը, վոր պրոլետարի անվճար աշխատանքից է ծագում և նույնքան որինաչափ կերպով, ինչպես և ամբողջ ապրանքը, անցնում է կապիտալիստին ի սեփականութեուն: Այստեղ մենք մեր ձեռքերով շոշափում ենք շահագործման արմատը:

Քայց այս բոլորը չե. կապիտալիստի հունձը դեռ շտեմարանները չեն տարված: Շահագործման պտուղն հրապարակի վրա ե, բայց դեռ չես այն ձեւով, վոր ձեռնարկողին պիտանի չե: Քանի նա տիրում ե այս պտղին ապրանքների պահեստանոցի կերպարանքով, այնքան ժամանակ կապիտալիստը չի կարող լիասիրտ ուրախանալ յուր շահագործման համար: Նա անտիկ, հուշահռովմեական աշխարհի ստրկատեր չե եվ վոչ ել միջնադարյան ֆեոդալ իշխող, վորոնք իրենց սեփական պերճութեան կամ իրենց պալատի շքեղութեան համար քամում եյին բանվոր մարդկանց: Կապիտալիստին հարկավոր ե, վոր նրա հարստութեանը կանխիկ դրամ լինի և նա կարողանա այն ոգտագործել յուր վիճակին վայել կենցաղավարութեանը գուղընթաց ու յուր կապիտալի անընդհատ մեծացման համար: Այս բանի համար անհրաժեշտ ե ծախել վարձու բանվորները արտադրած ապրանքները՝ սրանց մեջ մացրած հավելյալ արժեքի հետ միասին:

Ապրանքը պէտք ե գործարանային պահեստանոցներից ու գյուղատնտեսական շտեմարաններից շուկա գնա: Կապիտալիստն հետեւում ե նրան դրասենյակից բորսա. մենք ել «Կապիտալի» յերկրորդ հատորում նրա հետքը բռնած գնանք այնտեղ:

Ապրանքային փոխանակութեան ասպարիզում, վորտեղ կապիտալիստի կյանքի յերկրորդ արարն ե խաղացվում, ներկայացվում, նրա առաջ ծագում են շատ դժվարութեաններ: Յուր գործարանում, յուր բերդում նա տեր ու տնօրեն եր: Այնտեղ թագավորում եր խստագույն

կազմակերպութեանը, կարգապահութեանն ու պլանաչափութեանը: Ապրանքային շուկայում, ընդհակառակը, թագավորում ե լիակատար անիշխանութեանը, այսպես կոչված ազատ մրցումը: Այստեղ վոչ վոր բան չունի ուրիշ վոչ վորքի հետ և վոչ վորք ել բան չունի բոլորի հետ ամբողջութեամբ առած: Սակայն այնուամենայնիվ կապիտալիստն հենց այս անիշխանութեան միջոցով ե զգում յուր ըստ ամենայնի կախումն ուրիշներից, հասարակութեանից:

Նա պետք ե յուր բոլոր մրցակիցների հետ համաքայլ ընթանա: Յեթե նա յուր ապրանքների վերջնական վաճառքն ավելի կուշացնե, քան բացարձակաբար անհրաժեշտ ե, յեթե բավականաչափ փող հետ չի դնի և ժամանակին չի գնիլ հում նյութերն ու ամեն անհրաժեշտ բաները, վորպեսզի այդ միջոցին ձեռնարկութեանը չտուժե ընդհատումից, յեթե հոգա չի տանիլ այն մասին, վոր ապրանքների վաճառքից հետո նորից յուր ձեռքերում յերեվան յեկած փողերը չմնան առանց գործի, այլ ոգտավետ կերպով տեղավորվեն վորեվ ձեռնարկութեան մեջ, ապա նա այսպես կամ այնպես հետ կմնա ուրիշներից: Հետ մնացողին չները կծում են, և այն ձեռնարկողը, վորը չի հոգացել այն մասին, վոր նրա գործը գործանոցի ու շուկայի արանքում նույն չափ հարթ ու սահուն ընթանա, ինչպես գնում ե գործանոցում, սովորական վաստակ չի ստանա, վորքան ել փութաջանութեամբ յուր կորզե յուր բանվորներից սրանց բոլոր ույթերը: Նրա «ագնվորեն աշխատած» վաստակի մի մասը դեմ կառնե, կը

կանգնե վորեւիե տեղ և չի ընկնիլ կապիտալիստի գրայտնը:

Սակայն այս գեո բոլորը չէ: Վորպեսզի կապիտալիստն հարստութիւն կուտակի, սրա համար հարկավոր է, վոր նա ապրանքներ, այսինքն սպառման առարկաներ մատակարարէ: Սակայն նա պետք է մատակարարէ ապրանքների հենց այն տեսակներն ու նմուշները, վորոնց կարիքն ունի հասարակութիւնը, և պետք է մատակարարէ այնպիսի քանակութեամբ, վորքանի պետք է գգում նույն հասարակութիւնը: Այլապես ապրանքները չծախված կմնան և սրա հետ ել կգործըրիանա նրանց մեջ ամփոփած հավելյալ արժեքը: Բայց այս բոլորն ինչպես իմանա առանձին կապիտալիստը:

Վոչ վոր չէ կարող նրան ասել, թե ճիշտ վորքան ու ինչպիսի ապրանքներ են հարկավոր հասարակութեանը, վոչ վոր չի կարող ասել նրա համար, վորովհետեւ վոչ վոր այս չգիտե: Չէ վոր մենք ապրում ենք անիշխանական հասարակութեան մեջ, վորը դուրի է պլանաչափութիւնից: Յուրաքանչյուր առանձին ձեռնարկող գտնվում է ճիշտ միեմնույն գրութեան մեջ: Սակայն այնուամենայնիւ այս քառուից, այս խառնաշփոթութեանից պետք է մի ինչ վոր ամբողջութիւն առաջանա, և այն հնարավոր կգարձնե ինչպես կապիտալիստների առանձին, մասնավոր գործն ու նրանց հարստացումն, այնպես և ամբողջ հասարակութեան կարիքների բավարարումն ու հետագա գոյութիւնը:

Ավելի ճիշտ ասած՝ պլանաչափութեանից դուրի շուկայի քառուից պետք ստեղծվի ա-

մենից առաջ առանձին կապիտալի մշտական շրջապտույտը, արտադրելու, ծախելու, գնելու ու նորից արտադրելու հնարավորութիւնը, վորի ընթացքում կապիտալը շարունակ փողային ձեւից անցնում է ապրանքայինին ու ընդհակառակը: Այս անցումները պետք է իրար համաձայնեցրած լինեն: Հարկավոր է փողի վորոշ պաշար՝ շուկայի ամեն կոնյուկտուրա գնման համար ոգտագործելու և ձեռնարկութեան ընթացիկ ծախսերը ծածկելու նպատակով: Մյուս կողմից՝ ապրանքների վաճառքի հետ ստաիճանաբար յետ յեկող փողը պետք է ամիշապես նորից մտցվի գործի մեջ: Առանձին կապիտալիստները, վորոնք առաջին հայացքից միանգամայն անկախ են թվում իրարուց, իրապես մեծ յեղբարութեան դաշինք են կնքում: Նրանք վարկի սիստեմի ու բանկերի միջոցով փոխառաբար միմիանց տալիս են անհրաժեշտ փողը և մյուս կողմից վեր առնում պահեստում ունեցած դրամը և հենց սրանով ել ապահովում անընդհատ արտադրութեան ու ապրանքների վաճառքի հնարավորութեանն ինչպես առանձին անհատների, այնպես ել հասարակութեան համար: Վարկը, վոր բուրժուական քաղաքականութիւնը կարող է բացատրել լոկ իրքեւ ապրանքապտույտը գյուրացնելու համար սահմանած խորամանկ հնար, Մարքսը լուր աշխատութեան յերկրորդ հատորում հաջող պարզաբանում է, թե այն, այսինքն վարկը, կապիտալի գոյութեան մի հասարակ ձեւն է, կապիտալի կյանքի յերկու փուլերի միջեւ յեղած կապն է, վոր գոյում է իրար արտադրութեանն ու ապրանքային շուկան, այլեւ առանձին կա-

պիտաւների ինքնամփոփ թվացող շարժումները: Յերկրորդ՝ առանձին կապիտաւների քասսի մեջ հարկավոր ե շարունակ անխախտ պահել հասարակութեան արտադրութեանն ու սպառումն ամբողջութեամբ վերցրած, ընդ վորում պահել այնպես, վոր հասարակութեան համար ապահովված լինեն կապիտալիստական արտադրութեան պայմանները, այն ե՝ արտադրութեան միջոցների ստեղծումը, բանվոր դասակարգի սնվելը, կապիտալիստների դասակարգի առաջընթաց հարստացումն, այսինքն՝ կապիտալի մշտապես աճող կուտակումն ու ոգտագործումը: Յուր աշխատութեան յերկրորդ հատորում Մարքսն առաջին անգամ, Ադամ Սմիթի ժամանակվանից հարյուր տարի հետո, թեյեմ լիովին չե լուծել, բայց որինաչափութեան ամուր հիմքի վրա յե դրել այս ասպարեզին վերաբերող առեղծվածների մի ամբողջ շարք: Նացույց ե տվել, թե ինչպես առանձին կապիտաւների քասսային անհամար շարժումներից մի ամբողջութեան ե կազմվում. թե ինչպես այս ամբողջութեան շարժումը վորոշ փոխադարձ հարաբերութեան շրջանակում ե պահպանվում մշտապես. թե ինչպես աճող, բարձրացող կոնյուկտուրայի առատութեան, անկման ու ճգնաժամերի մշտական տատանումների շնորհիվ նորից վերականգնում ե հավասարակշռութեանը, վորպեսզի նորից դուրս գա այս հավասարակշիռ վիճակից. թե ինչպես այն բոլորի շնորհիվ, վոր այժմյան հասարակութեան համար լուի միջոց ե, այն ե սեփական սնման ու տնտեսական առաջադիմութեան շնորհիվ, այլեւ այն բանի մի-

ջոցով, վոր նրա նպատակն ե, այն ե կապիտալի առաջընթաց կուտակումը, կապիտաւն ել տվելի վիթխարի չափերի յե հասնում:

Բայց այսքանով դեռ յեվս չեն սպառվում կապիտալիստի փշալից խնդիրները: Յերբ վաստակն աճող չափերով փողի յե վերածվում, սրանից հետո կամ սրան համընթաց ծագում ե այն մեծ հարցը, թե ինչպես պետք ե բաժանել ավարը: Սրա վերաբերմամբ հավակնութեան են արտահայտում բազմատեսակ խմբակներ. ձեռնարկողի հետ հայեմ առեկտրականը, բանկիրն ու հողատերը: Սրանք բոլորը նպաստել են վարձու բանվորի շահագործմանն ու նրա պատրաստած ապրանքների վաճառքին յուրաքանչյուրն յուր ասպարեզում. ուստի ե սրանցից ամեն մեկը պահանջում ե վաստակի յուր բաժինը: Սակայն այս բաշխումը շատ ավելի փափուկ խնդիր ե, քան առաջին հայացքից կարող ե թվալ: Յեմ ձեռնարկողների միջեմ ել, նայած ձեռնարկութեան տեսակին, ստացած վաստակների նշանավոր տարբերութեաններ կան, հենց վոր այս վաստակն, այսպես ասած, թարմ կերպարանքով ստացվում ե բանվորական գործանոցից:

Արտադրութեան մի ճյուղում ապրանքներն ստանալն ու վաճառելը շատ արագ ե կատարվում, այս պատճառով ել կապիտալը վերադառնում ե ոգուտով ամենակարճ ժամանակի ընթացքում ե տալիս ե նոր վաստակ: Արտադրութեան մի ուրիշ ճյուղում կապիտալն արտադրութեան մեջ մնում ե ամբողջ տարիներ ե միայն յերկար ժամանակից հետո ե վորոշ վաստակ բերում: Արտադրութեան վորոշ ճյուղերում ձեռ-

նարկողը պետք է յուր կապիտալի նշանավոր մասը ծախսե արտադրութեան մեռյալ միջոցները - շինութեանները, թանկ մեքենաները ու այլոց վրա, վորոնք ինքնըստինքեան վոչինչ չեն սալիս, վաստակ չեն բերում, բայց այնուամենայնիվ վաստակ կորցելու, ստանալու համար անհրաժեշտ են: Կան ուրիշ ճյուղեր ել, վորոնց մեջ ձեռնարկողը յուր կապիտալը գործադրում է գլխավորապես բանվորներին գործի գրավելու համար, և սրանցից յուրաքանչյուրը նրա համար վոսկե ձուեր ածող հավ է դառնում:

Այսպիսով նույն ինքն վաստակ ստանալու գործում առանձին կապիտալիստները միջեւ նշանավոր տարբերութեաններ են առաջանում, և բուրժուական հասարակութեան աչքում այս տարբերութեանները շատ ավելի մեծ չափով «աղաղակող անարդարութեաններ» են, քան վաստակի յուրահատուկ «բաժանումը» կապիտալիստի ու բանվորի միջեւ: Հապա ի՞նչ կերպով պետք է վորոշ հավասարութեան, ավարի «արդար» բաշխում սահմանել այն կերպ, վոր յուրաքանչյուր կապիտալիստ «ստանա յուրը»: Հարկ է լինում այս բոլոր հարցերը լուծելու առանց զիտակցական ու պլանաչափ բաշխման:

Ժամանակակից հասարակութեան մեջ բաշխումը նույնպիսի անիրիւստական բնույթ է կրում, վորքան և արտադրութեանը: Վոչ մի «բաշխում» սահմանած հասարակական մարշալի իմաստով գոյութեան չունի. կա միայն առ ու ծախս: Սակայն հապա ի՞նչպես է շահագործողների յուրաքանչյուր կատեգորիա ու սրանց միջից ել յուրաքանչյուր առանձին կապիտալիստ լոկ ապրանքային կույր փոխանակութեան ճանապարհ-

հավ ստանում հարստութեան իրեն հասանելի «արդար մասը», մի մաս, վոր «արդար» է կապիտալիստական տիրապետութեան տեսակետից և վորն ստեղծել է պրոլետարիատի բանվորական ուժը:

Այս հարցերին Մարքսը պատասխանում է յուր յերկի յերրորդ հատորում: Այն բանից հետո, յերբ նա առաջին հատորում քննել էր կապիտալի արտադրութեանն ու վաստակի կազմվելու գաղտնիքը, իսկ յերկրորդ հատորում շարադրել էր կապիտալի շարժումը գործարանի ու ապրանքային շուկայի միջև, հասարակութեան արտադրութեան ու սպառման միջև, Մարքսը յերրորդ հատորում ուսումնասիրում է վաստակի բաշխումը: Յեւ նա այս անում է միևնույն յերեք հիմնական նախադրյալներն անխախտ պահելով, այն է ընդունելով, վոր այն բոլորն, ինչ տեղի է ունենում կապիտալիստական հասարակութեան մեջ, չի կատարվում պատահաբար, այլ վորոշ, պլանաչափորեն ազդող որենքների համաձայն, թեև մասնակցող անձինք չեն զիտակցում այս որենքները. վոր տնտեսական հարաբերութեանները կողոպուտի ու գողութեան բռնի յեղանակի վրա չեն հիմնվում և վերջապես, վոր ամբողջութեան վրա պլանաչափորեն ներգոծելու վոչ մի հասարակական-բանական միտք յերևան չէ գալիս: Կապիտալիստական տնտեսութեան բոլոր յերևույթներն ու հարաբերութեանները թափանցիկ հետևողականութեամբ ու պայծառութեամբ Մարքսը դուրս է բերում, բղիւնցնում է բացառապես փոխանակութեան մեխանիզմից, ուրիշ խոսքով՝ արժեքի և սրանից բղխող հավելյալ արժեքի որենքից:

Յեթե մի ընդհանուր հայացք ձգենք Մարբ-
 օի ամբողջ աշխատութեան— «Կապիտալի» վրա՝
 յերեք հատորները միասին վերցրած, ապա կա-
 բելի և ասել, վոր առաջին հատորն յուր մեջ
 պարունակած արժեքի որենքի, աշխատավար-
 ձի ու հալելյալ արժեքի ուսմունքով մերկաց-
 նում, յերեկան և հանում ժամանակակից հա-
 սարակութեան շենքի հիմքը, իսկ յերկրորդ ու յեր-
 րորդ հատորները ցույց են տալիս վերին հարկերը
 շինութեան, վոր հաստատված և այս հիմքի վրա:
 Կամ ուրիշ տեսակ համեմատութեան գործածե-
 լով կարելի և ասել, վոր առաջին հատորը մեզ
 ցույց և տալիս հասարակական որգանիզմի սիր-
 տը, վորտեղ պատրաստվում և կենսատու նյութն,
 իսկ յերկրորդ ու յերրորդ հատորները պարզա-
 բանում են ամբողջ որգանիզմի արդան շրջա-
 նաութեանն ու սնվելը:

Բովանդակութեանը համապատասխան՝ մենք
 վերջին հատորներում մեզ գտնում ենք բոլո-
 րովին այլ մակարդակի վրա, քան առաջում:
 Առաջին հատորում մենք կապիտալիստական
 հարստացման աղբյուրը շոշափում ենք գործա-
 նոցում, հասարակական բանվորական խորը
 հանքասրահում: Յերկրորդ ու յերրորդ հատոր-
 ներում մենք շարժվում ենք մակերեվոլյութի
 վրա, հասարակութեան պաշտոնական բեմում:
 Այստեղ արդեն առաջին շարքում գտնվում են
 ապրանքների պահեստանոցները, բանկերը, բոր-
 սանները, փողային գործերը, «կարիքավոր հողա-
 տերերն» ու սրանց հոգսերը: Բանվորն այլ եվս
 չի մասնակցում այս բոլորին: Իսկապես նա
 դուրս չունի հետաքրքրվելու այն բոլորով, ինչ
 վոր կատարվում և նրա թիկունքում այն բա-

նից հետո, յերբ արդեն մաշկել են նրա կաշին,
 կյանքում ել, գործադբաղ ամբողջի ազմկալի
 իրարանցման միջոցին ել, մենք բանվորներին
 հանդիպում ենք միայն արշալույսի փայլի տակ,
 յերբ նրանք խումբ խումբ ուղղվում են գոր-
 ծանոցներն և մեկ ել վերահաս յերեկոյան մթ-
 նաշաղին, յերբ գործանոցներն իրենց խորքերից
 դուրս են ժայթքում նրանց՝ յերկար շարքերով:

Այսպիսով մութն և մնում այն խնդիրը, թե
 ինչ շահ կարող և ունենալ բանվորն այն գանա-
 դան մասնավոր հոգսերից, վոր ցուցահանում են
 կապիտալիստները վաստակ ստանալու ժամա-
 նակ, եվ նրանց փոխադարձ զժտութեաններից,
 վորոնք առաջանում են ավարը բաժանելու մի-
 ջոցին: Սակայն իրոք «Կապիտալի» յերկրորդ
 ու յերրորդ հատորները նույնքան հարկավոր են
 ժամանակակից անասական մեխանիզմի ըսպա-
 ուիչ ըմբռնման համար, վորքան եվ առաջին
 հատորը: Ի հարկ և, սրանք ժամանակակից
 բանվորական շարժման համար չունեն այն վրձ-
 սական ու հիմնական պատմական նշանակու-
 թեանն, ինչպես առաջին հատորը: Բայց սրանք
 պարունակում են բազմաթիվ ուղիղ հայացքներ
 ու կանխատեսութեաններ, վորոնք պրոլետարի-
 ստի գործնական կովի մեջ նրա հոգեվոր ըս-
 պառազինման համար անգնահատելի յեն: Իե-
 րենք յերկու սրինակ միայն:

Յերկրորդ հատորում բնեկով այն խնդիրը,
 թե ինչպես առանձին կապիտալների քառային
 շարժումներից կարող և առաջանալ հասարակու-
 թեան կանոնավոր մատակարարումն ու սնումը,
 Մարքսը բնականաբար շոշափում և ձգնաժամերի
 հարցը: Հարկ չկա այն եջերում ճգնաժամերի

մասին սիստեմատիկ ու գիտական հետազոտութիւնն վորոնելու, այլ այնտեղ կան միայն մի քանի թուուցիկ նկատողութիւններ: Բայց այս դիտողութիւններին ծանոթանալը մեծ ոգուտկրեր կրեց լուսավորված ու մտածող բանվորներին: Սոցիալ-դեմոկրատական ու մանավանդ արհեստակցական քարոզչութեան մշտական, այսպես ասած, յերկաթե թեղիսներից մեկն այն պնդումն է, թե ճգնաժամերն առաջանում են ամենից առաջ հենց կապիտալիստների կարճատեսութեան հետեւանքով. նրանք, կապիտալիստները չեն ուզում հասկանալ, վոր հենց իրենց զործատերերի բանվոր մասսաները նրանց ամենալավ սպառողները, զնորդներն են և վոր բանվորների աշխատավարձը բարձրացնելը բավական է վճարունակ սպառողներ ձեռք բերելու և ճգնաժամերի վտանգը վերացնելու համար:

Վորքան ել տարածված, ժողովրդական լինի այս հայացքն, այնուամենայնիվ սխալ է, և Մարքսն այն հերքում է հետեւյալ խոսքերով. «Լիակատար նույնարանութիւնն է պնդելը, թե ճգնաժամերն առաջանում են վճարունակ սպառման կամ վճարունակ սպառողների պակասութեան շնորհիվ. կապիտալիստական սիստեմն ընդհանրապես, բացի վճարունակ սպառողներից ուրիշ սպառող չի ճանաչում, չհաշված հասարակութեան հաշիւն պահվող ազգատներին ու «արիւկաներին»: Յերբ ապրանքները չեն ծախվում, այս հենց այն է նշանակում, վոր նրանց համար վճարունակ զնորդներ, ուրեմն և սպառողներ չեն ձարվում: Այս նույնարանութեանն ավելի խոր հիմնավորում տալու համար ասում են, վոր

բանվոր դասակարգը յուր սեփակ արդյունքի շահագանց չնչին մասն է ստանում և վոր այս կարիքը վերացնելու համար պետք է բանվորների ստացած մասը շատացնել, վորի հետեւանքով բնականաբար կաճե նրանց աշխատավարձը: Սրան պետք է առարկել, վոր սովորաբար ճգնաժամերին նախորդում է մի ժամանակաշրջան, յերբ աշխատավարձն ընդհանրապես բարձրանում է և բանվոր դասակարգը համեմատաբար մեծ բաժին է ստանում տարեկան արդյունքի այն մասից, վոր նշանակված է սպառման համար: Մարդկային առողջ ու «հասարակ» մտածողութեան ասպեկտների տեսակետով այսպիսի շրջանները պետք է, ընդհանրապես, հեռացնել ճգնաժամերը: Այս պատճառով պարզ է, վոր կապիտալիստական արտադրութիւնը պարունակում է մի քանի պայմաններ, վորոնք մարդկանց բարի ու չար կամքից անկախ են, վոր այս պայմանները բանվոր դասակարգի կարճատեւ հարաբերական բարորութիւնն են միայն թույլատրում, և այս բարորութիւնը մի մրրկահավ է միշտ, վոր վերահաս ճգնաժամ է գուշակում»:

Յեւ իրոք, յերկրորդ ու յերրորդ հատորները մեզ հնարավորութիւն են տալիս շատ խորը նայելու ճգնաժամերի ետեւանք: Բանից դուրս է դալիս, վոր այս ճգնաժամերը կապիտալի շարժման պարզապես անխուսափելի հետեւանքներն են, մի շարժում, վոր կատարորեն ու անհազու թյամբ կատակման ու ամման ձրգտելով շուտով դուրս է դալի սպառման սահմաններից, թեկուզ վորքան ել այս սպառումը

ընդլայնվի հասարակական առանձին դասակարգի գնորդային միջոցները շատանալու հետեվանքով կամ վաճառքի լիովին նոր շուկաներ նվաճելու հետեվանքով անգամ: Այս պատճառով հարկ է լինում հրաժարվել արհեստակցական ժողովրդականացրած քարոզչության հետեվում թաղանված այն մտքից, թե կապիտալի ու աշխատանքի միջև շահերի ներդաշնակութուն կա, վոր միայն կարճատես ձեռնարկողները չեն նկատում այն: Սրա հետ միասին չքանում է նաեվ կապիտալիզմի անտեսական անիշխանության մեջ վորեվ տեսակի սեղմացնող ուղղումներ մտցնելու ամեն մի հույս: Պրոլետարիատի նյութական բարձրացման համար մղվող կռիվը բավականաչափ ընտիր գեներեր ունի յուր հոգեվոր զինարանում և տեսականորեն անհիմն ու գործնականորեն յերկիմաստ պատճառաբանության կարիք չի գգում:

Ուրիշ որինակ: Յերբորդ հատորում Մարքսն առաջին անգամ տալիս է գիտական բացատրություն մի յերեվութի, վորի առաջ քաղաքատնտեսությունը յուր ծագման ժամանակիսից կանգ էր առնում անգոր ապշությամբ: Այս այն է, վոր արտադրության բոլոր ճյուղերում, վորքան էլ չափազանց տարբեր պայմաններում մուծված լինի նրանց մեջ կապիտալը, վերջինս միշտ բերում է այսպես կոչված «սովորական» վաստակ: Առաջին հայացքից այս յերեվութն իբրեվ թե հակասում է այն բացատրությանը, վոր սվել է Մարքսն ինքը, այն է՝ թե կապիտալիստական հարստությունը ծագում է վարձու պրոլետարիատի անվճար աշխատանքից: Յեվ իբր, ինչպես պետք է այն կապիտալիստը, վոր

յուր կապիտալի մեծ մասն է զրել արտադրության մեռյալ մասի մեջ, ստանա նույնպիսի վաստակ, վորքան է նրա այն ընկերակիցը, վոր նույն բանի վրա ծախսել է հուշին միջոցներ, վորի հետեվանքով վերջինս կարող է աշխատանքի լծել կենդանի ույծի ավելի մեծ քանակություն:

Յեվ ահա Մարքսը զարմանալի պարզ կերպով վճռում է այս հանկուղը՝ ցույց տալով, թե ինչպես վաստակի տարբերություններն իրար են հավասարվում շնորհիվ այն հանդամանքի, վոր ապրանքների մի քանի տեսակներ ծախվում են նրանց արժեքից բարձր գնով, իսկ մյուսները՝ արժեքից ցածր գնով, և թե ինչպես արտադրության բոլոր ճյուղերի համար կազմվում է «վաստակի միջին նորմա»: Ասանց այս մասին գաղափար ունենալու, առանց վորեվ գիտակից փոխադարձ համաձայնության, կապիտալիստներն ապրանքների փոխանակության ժամանակ կարծես հավաքում, մի կույտ են անում իրենց բանվորներից իլած սմբողջ հավելյալ արժեքն և այնուհետեվ շահագործման ընդհանուր հունձը յեզրայրարար բաշխում են իրար միջև՝ տալով յարաքանչյուրին մի մաս, վոր համապատասխան է նրա կապիտալի մեծությանը: Այսպիսով առանձին կապիտալիստն ստանում է վոչ թե անհատարար ձեռք բերած վաստակն, այլ յուր բոլոր ընկերակիցների ձեռք բերած վաստակի՝ իրեն իբրեվ բաժին հասանելի մասը: «Չանազան կապիտալիստները, վորչափով վաստակն է ի նկատի առնվում, հանդես են գալիս իբրեվ մի ակցիոներական ընկերության բաժնետերեր, ընդ վորում վաստակի մասը հաշվում են տոկոսներով, այս պատճառով էլ գանազան կապիտա-

լիստների համար վաստակը տարբերվում է ընդհանուր ձեռնարկության մեջ նրանց դրած կապիտալի մեծության համեմատ, ընդհանուր ձեռնարկության մեջ նրանց ունեցած համեմատական մասնակցության չափով»:

«Վաստակի միջին նորմայի» այս ըստ յերեվույթին լիովին չոր ու ցածաք որենքի մեջ ինչպիսի խոր ըմբռնումն է պարունակվում: Ինչպես պայծառ է այն լուսաբանում կապիտալիստների դասակարգային համերաշխության նյութական ամուր պատվանդանը: Ամենորյա պայքարի մեջ նրանք հանդես են գալիս իբրև միմյանց դեմ կռվող յեղբայրներ, սակայն բանվոր դասակարգի նկատմամբ նրանք կազմում են ֆրանկմասոնական յեղբայրության նման մի բան, վոր ամենասերտ ու ամենից յեսասեր կերպով շահագրգռված է բանվորների ընդհանուր շահահագործումով: Իհարկե առանց անտեսական որենքների ներգործությունները մազաչափ անգամ գիտակցելու՝ կապիտալիստներն յերևան են հանում խոր ըմբռնում այն մասին, վոր իրանց սեփական դասակարգային շահերն ընդհանուր են ու պրոլետարիատի շահերին հակադիր: Պատմության բոլոր փոթորիկների միջոցին նրանց այս ըմբռնումը, դժբաղդաբար, ավելի ամուր ու հուսալի յե յեղել, քան բանվորների դասակարգային ինքնագիտակցությունը, վոր առաջին անգամ մեկնաբանվել ու հիմնավորվել է Մարքսի ու Ենգելսի յերկերում:

Այս յերկու համառոտ ու պատահաբար քաղած որինակները ցույց են ապիս, թե բանվորներին լուսավորուող համար հոգևոր ներգործության ու խորացման ինչպիսի կուսական

զանձեր են պարունակում «կապիտալի» վերջին յերկու հատորները, զանձեր, վորոնք դեռևս ժողովրդականացման են սպասում: Չնայած իրանց անկատար, չվերջացրած լինելուն՝ այս յերկու հատորը տալիս են ավելի, քան կարող է տալ վորևէ պատրաստի ճշմարտություն: Նրանք առաջ են բերում մաքի գործունեություն, դրդում են քննադատության ու ինքնաքննադատության, վոր ամենահիմնական տարրն է այն ուսմունքի, վոր ժողովրդություն է թողել Մարքսը:

ՖՐ. ԵՆԴԵԼՍ

**Կ. ՄԱՐԲՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՍԴԱՐԵԶՈՒՄ**

(Մի հատված «Կապիտալի» II հատորի առաջաբանից, վերտեղ ենդելսը ցույց տալով, Վոր հավելյալ արժեքի գոյություն ու ծագման մասին Մարբսից առաջ գրել են Ադամ Սմիտը, Ռիկարդոն, Եդմոնդը, Տոմպսոնը, Հոյսկինն ու այլք, շարունակում ե.)

Սակայն այս դեպքում հապա ինչ նոր բան է ասել Մարքսը հավելյալ արժեքի մասին: Հապա ինչպես յեղալ, վոր Մարքսի՝ հավելյալ արժեքի թեորիան այնպիսի տպավորություն թողեց, ինչպիսին գործում է պարզ յերկնակամարից պայթիոդ վորոտը, և այն ել բոլոր քաղաքակիրթ յերկիրներում, մինչդեռ նրա բոլոր նախորդների թեորիաներն, ի թիվս վորոց նաև Ռոսերբուգոսինը, վոչ մի ազդեցություն չարին:

Քիմիայի պատմությունը մի սրինակով կարող է պարզաբանել այս:

Ինչպես հայտնի է, դեռ XVIII դարի վերջերում ել իշխում էր ֆլոգիստոնյան թեորիան, ըստ վորի յուրաքանչյուր այրման գործողության եռությունն այն էր, վոր այրվող մարմնից բաժանվում էր մի ուրիշ, յենթադրական մարմին, բացարձակ հրավառ նյութ, վորին ֆլոգիստոն անունն էյին տվել: Այս թեորիան այն ժամանակ հայտնի քիմիական յերևույթները

մեծ մասը բացատրելու համար բավարար էր, թեև մի բանի դեպքերում այս թեորիան առանց քաշքուռների չէր կարողանում մեկնել յերկվույթները: Բայց ահա 1774 թվին Պրիստլեյը հայտնագործեց մի տեսակ ոդ, «վորը նա գտավ այնքան մաքուր, զուտ ու այնքան ազատ ֆլոգիստոնից, վոր նրա հետ համեմատած՝ մաքուր ոդն արդեն ապականված էր թվում»: Պրիստլեյն «ապաֆլոգիստոնացած ոդ» անվանեց այն: Ծուռով այնուհետև նույն տեսակ ոդ հայտնագործեց Շելեն Եվեգիայում և ապացուցեց, վոր այն գոյությունն ունի մթնոլորտում: Շելեն գտավ նայև, վոր այս ոդը չքանում է, յեթե նրա մեջ կամ սովորական ոդի մեջ նա վառում էր վորեվ է մարմին, ուստի և հրային ոդ անվանեց այն: «Այս տվյալներից նա այն յեզրակացությունն հանեց, թե ֆլոգիստոնի ու ոդի բաղադրիչ մասերից մեկն ու մեկի խառնումից առաջացած միացումը վոչ այլ ինչ է, յեթե վոչ կրակը կամ ջերմությունը, վոր անցնում է ապակու միջից»: *)

Պրիստլեյն, ինչպես և Շելեն, թթվածինն եին գտել, բայց չգիտեյին, թե իրանց ձեռքում յեղածն ինչ բան է նրանք «գուրս չեկան» ֆլոգիստոնյան «կատեգորիաների շրջագծի միջից», վորոնց հանդիպել եին իրենց նախորդների մոտ: Այն տարրը, վորին վիճակված էր բոլոր ֆլոգիստոնյան հայացքները խորտակել ու քիմիսն հեղսփոխել, նրանց ձեռքին գորչում էր առանց վորևե պտուղ տալու: Բայց Պրիստ-

*) Roscoe-Schorlemmer, «Ausführliches Lehrbuch der Chemie». Braunschweig, 1877, I, p. 13, 18.

լեյն այնուհետև անմիջապես հաղորդեց յուր գյուտի մասին Փարիզ, Լաուազեյին, իսկ Լաուազեն այս նորագյուտ իրողությամբ ղեկավարվելով՝ վերաբնեց ամբողջ ֆլոգիստոնյան քիմիան և առաջին անգամ նա հայտնագործեց, թե նոր տեսակի ոգը քիմիական մի տարր էր, թե այլման միջոցին այրվող մարմնից վոչ թե խորհրդավոր ֆլոգիստոնն է բաժանվում, այլ այս նոր տարրն է միանում մարմնին, և այսպիսով առաջին անգամ նա վոտքի կանգնեցրեց ամբողջ քիմիան, վորը յուր ֆլոգիստոնյան ձեւով կանգնած էր գլխիվայր: Յեւ յեթե նույն իսկ Լաուազեն չէր գտել թթվածինը մյուսների հետ միաժամանակ ու նրանցից անկախ, ինչպես պնդում էր հետազայում, ապա այնուամենայնիվ իսկապես նա էր, վոր հայտնագործեց թթվածինը և վոչ թե այն յերկուսը, վորոնք լոկ նկարագրել են այն՝ առանց նույն իսկ գլխի ընկնելու, թե ինչ էին նկարագրում:

Հավելյալ արժեքի թեորիայում Մարքսը նույնն է յուր նախորդների նկատմամբ, ինչ վոր է Լաուազեն Պրիստլեյի ու Շելլեյի նկատմամբ: Գոյությունն արդյունքի արժեքի այն մասի, վոր մենք այժմ հավելյալ արժեք ենք անվանում, Մարքսից շատ առաջ էր հաստատված: Ճիշտ նմանապես շատ կամ քիչ պարզությամբ ասված է յեղել, թե ինչից է կազմվում այն հավելյալ արժեքը. ասված է յեղել, թե այն կազմվում է այն աշխատանքի արդյունքից, վորը յուրացնողը վոչ մի համարժեք չէ վճարել: Սակայն սրանից այն կողմ չեին անցնում: Վոմանք—բուրժուական կլասսիկ տնտեսագետները—շատ շատ՝ ուսումնասիրում էին այն քանակային հարա-

բերությունը, վորով աշխատանքի արդյունքը բաշխվում էր մի կողմից՝ բանվորի ու մյուս կողմից՝ արտադրության միջոցների տիրոջ միջեւ: Մյուսները—սոցիալիստներն—այս բաշխումն անարդար էին համարում և ուտոպիական միջոցներ էին վորոնում անարդարությունը վերացնելու համար: Թե նրանք ու թե սրանք ի վիճակի չեին դուրս գալու այն տնտեսական կատեգորիաների շրջագծից, վոր գտել էին իրենց նախորդների մոտ:

Բայց անհ հանգես յեկավ Մարքսը: Յեւ այն էլ ուղղակի հակասելով յուր բոլոր նախորդներին: Այնտեղ, վորտեղ նախորդները լուծումն էին տեսնում, նա միայն առեղծված էր նկատում: Նա տեսնում էր, թե այստեղ յուր առջեւ վոչ ապաֆլոգիստոնացած ոգ է և վոչ էլ հրային ոգ, այլ թթվածին: Նա տեսնում էր, թե այստեղ բանն այն չէ, վոր սարգ մատնանշվի մի տնտեսական իրողություն կամ ցույց տրվի, վոր այս իրողությունն հակասում է հավիտենական արդարությանն ու ճշմարիտ բարոյականությանը, այլ խոսքը վերարբերում է մի այնպիսի իրողության, վորին վիճակված է հեղաշրջում առաջ բերել ամբողջ տնտեսագիտության մեջ և վորն ամբողջ կապիտալիստական արտադրությունն հականալու բանայի էր ընձեռում այն մարդին, ով կկարողանար գործածել այս բանային: Դեկավարվելով այս իրողությամբ՝ նա հետազոտեց բոլոր նախկին կատեգորիաներն, ինչպես Լաուազեն ղեկավարվելով թթվածնով՝ հետազոտել էր ֆլոգիստոնյան քիմիայի նախկին կատեգորիաները:

Վորպեսզի Մարքսը իմանար, թե ինչ բան է հավելյալ արժեքը, պետք է գիտենար, թե ի՞նչ է արժեքը: Նա պետք է ամենից առաջ քննադատութեան յենթարկեր Ռիկարդոյի բուն իսկ արժեքի թեորիան: *)

(1). Յեվ այսպես, Մարքսն հետազոտեց աշխատանքը սրա այն հատկութեան կողմից, վոր արժեք է ստեղծում և առաջին անգամ հաստատեց, թե ի՞նչպիսի աշխատանքն, ինչո՞ւ և ինչպես է արժեք առաջ բերում, *) հաստատեց, վոր արժեքն ընդհանրապես վոչ այլ ինչ է, յեթե վոչ այս տեսակի մարմնացած, բյուրեղացած աշխատանք, մի կետ, վոր Ռուդերտուսը մինչեվ յուր կյանքի վախճանը չէր ըմբռնում:

(2). Այնուհետեվ Մարքսն հետազոտեց ապրանքի ու փողի հարաբերութիւնը և ցույց տվեց, թե ի՞նչպես ու ի՞նչու — շնորհիվ արժեքի վորպիսութեան, վոր հատուկ է նրան — ապրանքն ու ապրանքային փոխանակութիւնը պետք է ծնունդ տան ապրանքի ու փողի հակադրութեան: Նրա՝ փողի թեորիան, վոր հիմնվում է վերոհիշյալի վրա, զբամի առաջին սպառիչ թեորիան է, վորն այժմ լուրջամբ ընդունում են բոլորը:

*) Հետեւյալ հատվածում, նոր տողերն ու փակագծերի մեջ առած թվանշանները բնագրինը չեն, այլ հայերեն թարգմանութեանը:

Ծ. Թ.

*) Ենդելսի խոսքը վերաբերում է հանրորեն-անհրաժեշտ ու վերացական մտրղկային աշխատանքին, վոր տարբերվում է սպառողական արժեք ստեղծող, հատուկ բնույթ ունեցող, պրոֆեսիոնալ աշխատանքից:

Ծ. Թ.

(3). Նա հետազոտեց փողի կապիտալ դառնալը և սպացուցեց, վոր այս յերեվույթը հիմնվում է բանվորական ույժի առ ու ծախսի վրա: Աշխատանքի փոխարեն բանվորական ույժը — արժեք ստեղծող ունակութիւնը — գնելով նա մեկ անգամից վճուեց այն զժվարութիւններից մեկը, վորոնց ընդհարվելով խորտակվել ևր Ռիկարդոյի գպրոցը: Այս զժվարութիւնն այն էր, վոր հիշյալ գպրոցը չէր կարողանում հաշտեցնել կապիտալի ու աշխատանքի իրար հետ փոխանակվելն աշխատանքի արժեքը վորոշելու այն որենքի հետ, վոր սահմանել ևր Ռիկարդոն:

(4). Սահմանելով կապիտալի բաժանումը մշտականի ու փոփոխականի՝ նա առաջինն հասավ այն բանին, վոր մինչեվ մանրամասնութիւնները պատկերացրեց հավելյալ աշխատանքի կազմվելու պրոցեսի իրական ընթացքն և այսպիսով պարզարանեց այն բանը, վոր նրա նախորդներից վոչ մեկը չէր արել. հետեւաբար, նա տարբերութիւն ստեղծեց բուն իսկ կապիտալի մեջ, մի տարբերութիւն, վորից վճուականորեն ի վիճակի չէին գլուխ հանելու վոչ Ռուդերտուսը, վոչ բուրժուական տնտեսագիտները, սակայն վորը բանալի է ընձևում ամենախճճված տնտեսական առեղծվածները լուծելու, ինչպես այս ամենահամոզիչ կերպով սպացուցում է «Կապիտալի» II դիրքն ու մասնավանդ III-ը...

(5) Այնուհետեվ նա հետազոտեց նույնիսկ հավելյալ աշխատանքը, յերեվան հանեց նրա յերկու ձևվերը — բացարձակ ու հարաբերական հավելյալ արժեքը և ցույց տվեց, թե ինչպիսի

տարբեր, բայց յերկու դեպքում ել վճռական գեր և խաղացել այս արժեքը կապիտալիստական արտադրութեան պատմական զարգացման մեջ:

(6). Հավելյալ արժեքի թեորիայի վրա հիմնվելով՝ նա դուրս բերեց ու զարգացրեց աշխատավարձի թեորիան, վոր առաջին բանային (ուսցիոնալ) թեորիան և մեր ունեցածներէց և

(7). առաջին անգամ նա եր, վոր տվեց կապիտալիստական կուտակման պատմութեան հիմնական գծերն ու

(8). նրա պատմական տենդենցներէ շարադրանքը:

Իսկ Ռոզբերտուսը: Կարդալով այս բոլորը՝ նա, ինչպես յուրաքանչյուր միտումավոր արնտեսագետ, այստեղ տեսավ մի «հարձակում հասարակութեան վրա»: Նա գտավ, վոր ինքն արդեն ասել և շատ ավելի կարճ, պարզ ու վորոշ, թե վորտեղից և առաջանում հավելյալ արժեքը և, վերջապես, գտավ, վոր այս բոլորն իրավացի և միայն «կապիտալի ժամանակից ձեւի» նկատմամբ, այն կապիտալի, ինչպիսին գոյութեան ունի պատմութեան մեջ, բայց վոչ «կապիտալի դադարի» նկատմամբ, այսինքն վոչ այն ուտոպիստական մտապատկերի նկատմամբ, վոր ունի պարոն Ռոզբերտուսը կապիտալի մասին: Կատարելապես նույն կերպ ծերունի Պրիստլեյը մինչեւ յուր վերջին սրերն համատարիմ եր մնում ֆլոգիստոնին և չեր ուզում մի խոսք լրասել թթվածնի մասին: Միայն Պրիստլեյն իրոք վոր առաջինն եր նկարագրել թթվածինն, այն ինչ Ռոզբերտուսն յուր հավելյալ արժեքով կամ, ավելի լավ և ստեղ, յուր «ուենտայով» նո-

րից հայտնագործել եր մի ընդհանուր տեղի: Իսկ Մարքսը, Լաուագելի վարքագծի հակառակ, շատ բարձր եր այն վիճակից, վոր պնդեր, թե ինքն և առաջին անգամ հայտնագործել հավելյալ արժեքի գոյութեան իրողութեանը:

ՖՐ. ԵՆԳԵԼՍ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿԱՐԴԱԼ «ԿԱՊԻՏԱԼԻ»
ՅԵՐԿՐՈՐԴ ՈՒ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՆԵՐԸ

(Մի հասված Ֆր. Ենգելսի՝ Վիկտոր Ս. Ղլերից ուղարկած Շամակից, վեր գրել է 1895 թվականի մարտի 16-ին Լոնդոնից):

Թանգագլին Վիկտոր,

...Վորովհեան դու ծակում *) գտնվելով պատրաստվում ես «Կապիտալի» II ու III հատորների վրա քրտինք թափելու, ուստի ցանկանում եմ քեզ մի քանի ցուցումներ անել այդ աշխատանքի թեթեւացնելու համար:

Հատոր II, բաժին I. առաջին գլուխը կարդան հիմնովին և այն ժամանակ 2-րդ և 3-րդ գլուխներն հեշտությամբ կհաղթահարես: 4-րդ գլուխն, իբրև ավտոմատ, նորից մեծ ուշադրություն և պահանջում. 5-ն ու 6-ը հեշտ են և քննություն են առնում յերկրորդական նյութեր, մանավանդ 6-ը:

Բաժին II. 7, 8 ու 9 գլուխները կարևոր են, հատկապես կարևոր է 10-ն ու 11-ը, նույնպես և 12, 13 և 14-ը: Ընդհանրապես 15, 16 ու 17 գլուխներն առաջին անգամ բավական և մի թեթև աչքի անցկացնել:

Բաժին III-ը ֆիզիոկրատների ժամանակից

*) Աղբերն այն միջոցին բանտարկված էր:

սկսած, առաջին անգամ ձեռնարկած ու գեղեցիկ իրապորժած մի փորձ է՝ սլատկերացնելու ապրանքի ու փողի ամբողջ շրջապտույտը կապիտալիստական հասարակության մեջ. գեղեցիկ է այստեղ բովանդակությունը, սակայն ձեռ սարսափելի ծանրածանր է, վորովհեան նախ՝ բաժինը թեմայի յերկու տարբեր մշակումների միացման ազդյունք է, մշակումներ, վորոնք տարբեր մեթոդների վրա յեն հիմնվում և յերկրորդ՝ № 2 մշակումը մինչև վերջ հասցրել էր Մարքսը հիվանդագլին դրություն մեջ, յերբ ուղեգր տառապում էր հարածամ անքնություն: Այս նկատի ունենալով, յես յեթե քո տեղը լինեյի, այս բաժնի ուսումնասիրությունը կթողնեյի ամենից վերջը կատարելու, մինչեւ այն ժամանակը, յերբ սերսած, պրծած կլինեյի ամբողջ III հատորը:

Հետո գալիս է III հատորը:

Այստեղ I բաժնում կարևոր են 1-ից մինչև 4-րդ գլուխները, այն ինչ 5, 6 և 7 գլուխները շարադրանքի ընդհանուր կապի տեսակետից ավելի քիչ են կարևոր, այս պատճառով ել առաջին անգամ նրանց վրա շատ ժամանակ կորցնել չարժե:

Բաժին II. ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ԵՆ 8, 9 ու 10 գլուխները: Պետք է թեթևակի աչքի անցկացնել 11 ու 12 գլուխները:

Բաժին III. Ամեն ինչ (այս բաժնում) սկսած 13 գլխից ու 15-ով վերջացրած, ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Ե:

Բաժին IV. նույնպես կարևոր են բոլոր գլուխները (16—20), բայց հեշտ էլ կարգացվում են:

Բաժին V. Խիստ եյական են 21-ից մինչև 27 գլուխները, ավելի քիչ եյական է 28 գլուխը: Եական է 29 գլուխը: 30, 31, 32 գլուխները քո նպատակները համար, ընդհանրապես ասած, եական չեն: Թղթադրամները ու հարակից խընդիրները պարզաբանության համար եական են 33 ու 34 գլուխները. մուրհակները միջազգային կուրսի խնդիրը լուսաբանելու համար եական է 35 գլուխը, քեզ օտս հետաքրքրական է 36 գլուխը, վորն է հեշտ է կարգացվում:

Բաժին VII. շատ լավ է: Դժբաղդաբար, շարագրանքի միայն կմախքն է ուրվագծած, այն էլ հարածամ անբնության սաստիկ հետքերով:

Յեթե դու այս ցուցումներին հետևելով հիմնովին յուրացնես եականն ու առաջին անգամ համեմատաբար թուուցիկ կարգաս պակաս կարևորը (ամենից լավ կլինի, յեթե նախորոք նորից կարգաս I հատորի ամենից եական գլուխները), այն ժամանակ պարզ գաղափար կկազմես աշխատության մասին ամբողջությամբ առած, վորից հետո քեզ հեշտ կլինի կրկնելով սերտել այն տեղերը, վոր ժամանակավորապես մի կողմ էիր թողել:

Սրտագին բարև: Քո Ֆ. Ե:



«ԿԱՊԻՏԱԼԻ» ՅԵՐԵՔ ՀԱՏՈՐԻ ԲՈՎԱՆ-
ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բաժինների վերնագրերով.

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՍԸ.

(Ա. հատորի առաջին հրատարակությունը լույս է բնծայել ինքը Կ. Մառեսը 1867 թվականին):

- I. Ապրանքն ու փողը:
- II. Փողի՝ կապիտալ զառնալը:
- III. Բացարձակ հավելյալ արժեքի արտադրությունը:
- IV. Հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը:
- V. Բացարձակ ու հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը:
- VI. Աշխատավարձը:
- VII. Կապիտալի կուտակման պրոցեսը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԿԱՊԻՏԱԼԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՍԸ.

(Բ. հատորը խմբագրել յեվ լույս է բնծայել Ք. Ե. Ե. գելսը 1895 թվականին):

- I. Կապիտալի ձեվափոխություններն ու սրանց շրջապատույթը:
- II. Կապիտալի պտույտը:


III. Ամբողջ հասարակական կապիտալի
փերտորտադրութիւնն ու շրջանառու-
թիւնը:

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Ն Ա Տ Ո Ր

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՍԸ
ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՄԾ.

(Գ. Խատորը խմբագրել յեվ լույս Ե բճճայել դարձյալ
Ք. Եճգիւթը 1894 թվականից):

- I. Հավելյալ արժեքի՝ վաստակ դառնալն
ու հավելյալ արժեքի նորմայի՝ վաս-
տակի նորմա դառնալը:
- II. Վաստակի՝ ժիջին վաստակ դա նալը:
- III. Վաստակի նորմայի անկման տենդեն-
ցի որննքը:
- IV. Ապրանքային կապիտալի ու զրամա-
կան կապիտալի՝ ապրանքառեվտրա-
յին ու զրամառեվտրային կա փ
տալ դառնալը (առեվտրականի կա փ
տալը):
- V. Վաստակի տրոհումը առկոսի ու ձի
նարկողի հասույթի: Տոկոսաբեր 4
պիտալը:
- VI. Ավելադիր վաստակի՝ հողային ունտ
դառնալը:
- VII. Հասույթները:



ԳԻՆՆ Ե՛ 50 ԿՈՊԵԿ ԶԵՐԿ.

